6 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2012 ՀԻՆԳՇԱԲԹԻ 154(5006)

Ազգ
Azg

ISSN: 1829-1651

# ՌԱԿ դիվանի անդամները կառավարության ղեկավարին են ներկայացրել կուսակցության առաջիկա ծրագրերը

Վարչապետ **Տիգրան Սարգսյանը** երեկ ընդունել է Ռամկավար ազատական կուսակցության վարչության գործադիր մարմնի՝ դիվանի ներկայացուցիչներին՝ վարչության ատենապետ Հակոբ Ավետիքյանի գլխավորությամբ։ «Ուրախ եմ, որ Ռամկավար ազատական կուսակցությունն սկսել է վերամիավորման եւ ուժերի համախմբման գործընթաց։ ՀՀ իշխանությունները շահագրգռված են, որպեսզի մեր ավանդական կուսակցությունները լինեն ուժեղ, համախմբված, որովհետեւ դա հայ ժողովրդի ինքնակազմակերպման կարեւորագույն միջոցներից մեկն է։ Ավանդական կուսակցությունների ցանկացած պառակտում չի բխում մեր ժողովրդի շահերից», ասել է կառավարության ղեկավարը։ Վարչապետը նշել է, որ իշխանությունները շահագրգռված են, որպեսզի ՌԱԿ-ի դերակատարությունը Հայաստանի քաղաքական դաշտում բարձրանա։

Հայաստանում վերջերս պաշտոնապես գրանցված եւ ՀՌԱԿ ու Արմենական-ՌԱԿ կուսակցությունների իրավահաջորդն ու իրավաժառանգորդը հանդիսացող Ռամկավար ազատական կուսակցության ղեկավար մարմնի ներկայացուցիչները վարչապետին են ներկայացրել կուսակցության առաջիկա ծրագրերը եւ տեղեկացրել, որ առաջիկայում նախատեսում են ակտիվ քաղաքական գործունեություն ծավալել, այդ թվում մասնակցել տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին։ ՌԱԿ վարչության գործադիր մարմնի ներկայացուցիչները վստահեցրել են, որ պատրաստ են իրենց գործունեությամբ նպաստել Հայաստանի առաջընթացին, փոքր եւ միջին բիզնեսի զարգացմանը, ինչպես նաեւ օլիգոպոլ երեւույթների դեմ պայքարին։

Այնուհետեւ զրուցակիցներն անդրադարձ են կատարել սփյուռքահայերի կողմից Հայաստանում ներդրումների իրականացման գործընթացներին։ Տիգրան Սարգսյանը նշել է, որ պետությունը պատրաստ է օժանդակություն ցուցաբերել սփյուռքահայ գործարարներին, մասնավորապես, վերջիններս կարող են իրենց բիզնես ծրագրերը ներկայացնել Զարգացման հայկական գործակալություն եւ ստանալ իրենց հետաքրքրող հարցերի պատասխաններն ու անհրաժեշտ օգնություն։

Վարչապետը հիշեցրել է, որ կառավարությունը սփյուռքահայերին օժանդակելու նպատակով վերջիններիս ազատել է բազմաթիվ ընթացակարգային ռեժիմներից եւ վարչարարական գործողություններից։

Հանդիպման մասնակիցները քննարկել են նաեւ կրթության եւ գիտության ոլորտում առկա խնդիրներին եւ դրանց լուծման հնարավոր քայլերին առնչվող հարցեր։

*ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ*



# Ազգային ժողովի կոնսենսուսային հայտարարությունը


ՖՈՏՈԼՈՒՐ

**ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

96 «կողմ», 1 «դեմ» ձայներով երեկ Ազգային ժողովն իր արտահերթ նիստում ընդունեց դատապարտող հայտարարություն՝ մարդասպան Ռամիլ Սաֆարովին արտահանձնելու եւ ներում շնորհելու փաստով։ «2004 թվականի փետրվարին Բուդապեշտում ՆԱՏՕ-ի դասընթացների ժամանակ հայ սպա Գուրգեն Մարգարյանին սպանած հանցագործին Հունգարիայի իշխանությունների կողմից Ադրբեջանին փոխանցելու եւ Ադրբեջանի նախագահի կողմից վերջինիս ներում շնորհելու կապակցությամբ»՝ այսպես է հայտարարության անունը։ Հայտարարության տեքստը, որ երկօրյա բուռն քննարկումներ էր անցել եւ ապա քննարկվող տեսքն ընդունել, ամփոփիչ ելույթով ներկայացրած ՀՀԿ-ական, ԱԺ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ **Արտակ Զաքարյանը** նշեց, որ միայն խմբագրական բնույթի փոփոխություններն են ընդունվել, եւ կարեւորեց դրա կոնսենսուսով ընդունումը։

ԱԺ-ն հայտարարում է, որ Հունգարիայի իշխանությունը եւս կրում է կատարվածի պատասխանատվությունը, դատապարտում է Հունգարիայի իշխանությունների վարքագիծը եւ խորհրդարանական մակարդակով կասեցնում Հունգարիայի հետ պաշտոնական հարաբերությունները։

*Տես էջ 2*

# Շվեյցարիան միջնորդում է՝ կարգավորելու Հունգարիա-Հայաստան հարաբերությունները

Հունգարիայի արտաքին գործերի նախարար Յանոշ Մարտոնին հայտարարել է, որ Հունգարիան ընդունել է Շվեյցարիայի առաջարկը՝ կարգավորելու Հայաստանի հետ հարաբերությունները։ Այս մասին տեղեկացանք «Արմենպրեսից», որը, վկայակոչելով հունգարական politics.hu կայքը, գրում է, որ Յանոշ Մարտոնին հունգարական պետական MRI ռադիոյին տված հարցազրույցում նշել է. «Ցավալի է, անընդունելի ու դատապարտելի, որ Ադրբեջանը դրժել է իր խոստումը եւ ներում է շնորհել Ռամիլ Սաֆարովին»։ Նախարարը նաեւ նշել է, որ Հունգարիան գործել է միջազգային նորմերի սահմաններում, ու իրենց արարքը տնտեսական որեւէ ենթատեքստ չի ունեցել։

Յանոշ Մարտոնին հավելել է, որ Շվեյցարիայի իր գործընկերն առաջարկել է իր երկրի աջակցությունը Հայաստանի հետ Հունգարիայի հարաբերությունների կարգավորման հարցում։ «Շվեյցարիան մշտապես եղել է չեզոք երկիր, եւ Հունգարիան պետք է օգտվի բոլոր հնարավորություններից Հայաստանի հետ հարաբերությունների լարվածությունը թուլացնելու համար», ասել է Մարտոնին։

**Ի. Պ.**

# Վերաքննիչը մերժեց Օսկանյանի ներկայացուցչի բողոքը

Երեկ ՀՀ վերաքննիչ դատարանը՝ դատավոր Հենրիկ Տեր-Ադամյանի նախագահությամբ, մերժել է Վարդան Օսկանյանի ներկայացուցիչ **Տիգրան Աթանեսյանի** բողոքն ընդդեմ Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների առաջին ատյանի դատարանի որոշման։

Վարդան Օսկանյանի ներկայացուցիչ Տիգրան Աթանեսյանը դատարանում վիճարկում է ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության կողմից փողերի լվացման հատկանիշներով 25.05.2012թ. քրեական գործ հարուցելու որոշումը։

Վերաքննիչ դատարանը բողոքի մերժումը հիմնավորել է բողոքի անհիմն լինելու հանգամանքով։ «ՀՀ վերաքննիչ դատարանը չի պատասխանել մեր ներկայացրած փաստարկներին։ Հետեւաբար, նույն բովանդակությամբ բողոք ներկայացվելու է նաեւ ՀՀ վճռաբեկ դատարան»,- ասել է Տիգրան Աթանեսյանը։

# Կոնգրեսականներն արտահայտել են իրենց վրդովմունքը

**Ամերիկայի հայկական համագումարն արտահայտում է իր դժգոհությունն ու վրդովմունքը Ռամիլ Սաֆարովին ներում շնորհելու առնչությամբ։ Լուրը, որ Ադրբեջանն օգտագործել է իր ֆինանսական ռեսուրսները ոճրագործի էքստրադիցիայի համար, ցնցել է համագումարի անդամներին։**

**Ամերիկայի հայկական համագումարի տարածած հաղորդագրության մեջ նշվում է, որ համագումարը գոհունակությամբ է վերաբերվում կատարվածի առնչությամբ ԱՄՆ-ի կոնգրեսականների արձագանքներին։ Կոնգրեսականներ Ֆրենկ Փալոնը, Բրեդ Շերմանը, Ադամ Շիֆը հանդես են եկել կատարվածի դեմ ու արտահայտել իրենց վրդովմունքը։**

**Ի. Պ.**

# Կատալոնյան քաղաքն անկախացել է Իսպանիայից

**Կատալոնիայի ինքնավար ընկերակցության քաղաքներից մեկը՝ Բարսելոնի նահանգի մեջ մտնող Սան Պեդրո դե Տորելյո քաղաքը իր տարածքը անկախ է հռչակել Իսպանիայի կենտրոնական կառավարությունից։ Քաղաքի օրենսդիրներն ընդունել են «Կատալոնյան ազատ տարածքի մասին» բանաձեւի նախագիծ, հաղորդում է Ինտերֆաքս գործակալությունը։**

**Պատգամավորները Կատալոնիայի խորհրդարանին կոչ են արել երկու ամսվա ընթացքում միաձայն բանաձեւ ընդունել ինքնավար ընկերակցության ազգային ինքնիշխանությանը վերաբերող բանաձեւ եւ տվյալ հարցի առթիվ անցկացնել հանրաքվե։**

**Բանաձեւի տեքստի հեղինակները Կատալոնիայի խորհրդարանին առաջարկել են անհապաղ ստեղծել ֆինանսների սեփական նախարարություն եւ ազգային բանկ, հարկային վարչություն, արդարադատության նախարարություն։ Բացի դրանից, նրանք կոչ են արել ամբողջ միջազգային ընկերակցությանը հայտարարել, որ սկսվում է Իսպանիայից Կատալոնիայի անջատման գործընթաց։**

**Օրենսդիրները Կատալոնիայի խորհրդարանին նաեւ առաջարկել են չեղյալ հայտարարել հասարակական եւ գիտական կյանքում կատալոներենի օգտագործումը սահմանափակող օրենքներն ու դատավճիռները, Իսպանիայի ոստիկաններին ու զինվորներին պարտավորեցնել Կատալոնիայի տարածքում գործողություն կատարելուց առաջ կապվել կատալոնյան իշխանությունների հետ։ Խորհրդարանին նաեւ առաջարկվել է հայցել միջազգային կազմակերպությունների հովանավորությունը։**

# Յարոմիր Շտետինա. Սաֆարովի հանձնումը ոչ միայն Հունգարիայի, այլեւ Եվրոմիության գործն է

**ՀԱԿՈԲ ԱՍԱՏՐՅԱՆ**
**Պրահա**

Չեխական մամուլն ու էլեկտրոնային լրատվամիջոցները շարունակում են անդրադառնալ ադրբեջանցի մարդասպան Սաֆարովի եւ նրա արտահանձնման հետ կապված միջազգային աղմուկին։

«Մեռած հայը լավ հայն է։ Ադրբեջանը ներում շնորհեց մարդասպանին», «Բաքվում մարդասպանին դիմավորեցին ինչպես հերոսի։ Եվրոպան լռում է», «Հայերն այրեցին հունգարական դրոշը, քանի որ ներում շնորհվեց մարդասպանին» եւ այլ վերնագրերով հոդվածները ողողել են չեխական մամուլը։ Ավելի զուսպ են հեռուստատեսային կայանները։ Ու թեեւ Չեխիայի խորհրդարանը նոր է վերադառնում արձակուրդից, սակայն արդեն կան առաջին ոչ պաշտոնական արձագանքները։ Մեր խնդրանքով կատարվածին այսպիսի գնահատական տվեց Չեխիայի Սենատի անդամ Յարոմիր Շտետինան.



«Ալիեւի գործելաոճն ինձ չի զարմացնում։ Նա տարիներ շարունակ ազգային ատելություն է սերմանել իր ժողովրդի մեջ, եւ Սաֆարովի կատարածը այդ քարոզչության արդյունքն է։ Հունգարիան նույնպես ինձ չի զարմացնում, քանի որ նավթային գումարներին ավելի մեծ նշանակություն է տրվում, քան եվրոպական բարոյական արժեքներին։ Եվ սա ոչ միայն Հունգարիայի, այլեւ ողջ Եվրոմիության գործն է։ Ցավոք, եվրոպական քաղաքականությունն այսօր փողին ավելի մեծ տեղ է տալիս, քան բարոյականությանը։ Մտավախություն ունեմ, որ այս հանգամանքն իր դերը կունենա նաեւ այն ժամանակ, երբ մի քանի տարի անց նշվի Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը։

*Տես էջ 2*

# «Հաղթում է նա, ով օգտագործում է թշնամու սխալները»

Ղարաբաղյան պատերազմում իր չիրականացած երազանքը Ադրբեջանն ուզում էր իրականացնել Ռամիլ Սաֆարովի միջոցով, սակայն դա նրա համար վերածվեց խայտառակության, զառանցանքի:

Դառնալով հերոս մարդուն, որը քնած ժամանակ սպանել է հայ սպայի օտար պետության մեջ, Ադրբեջանի առանց այն էլ անկում ապրած նկարագիրը հասավ զրոյի: Ոճրագործին ազատություն շնորհելը վարկաբեկեց ե՛ւ Ադրբեջանին, ե՛ւ Հունգարիային:

Հայկական կողմի վրդովմունքը հասկանալի է, սակայն այս դեպքում Ադրբեջանի սխալը հայկական կողմը կարող է օգտագործել հօգուտ իրեն: Հոգեբանական գիտությունների դոկտոր **Սամվել Խուդոյանը** հիշեցնում է, որ պատերազմում սովորաբար հաղթում է նա, ով օգտագործում է թշնամու սխալները, ու եթե քաղաքականության մեր պատասխանատուները չքնեն իրենց տեղում, կարող ենք լուրջ հաջողության հասնել: Հաջողություններից մեկն էլ, ըստ պարոն Խուդոյանի, Ղարաբաղի Հանրապետության անկախության ճանաչումն է, չնայած սա քաղաքական բավականին լուրջ ու խրթին հարց է, բայց մյուս կողմից էլ պահը շատ հարմար է:

Սամվել Խուդոյանը դիտարկել է ոճրագործի կերպարը վերջին մի քանի օրերի ազատության մեջ: Ցուցադրվող հեռուստակադրերում հոգեբանը չի նկատել բնական ու անկեղծ ուրախություն մարդասպանի դեմքին: Մասնագետը նաեւ ասում է, որ ադրբեջանցիների մի շերտի մեջ սկսվել է փսիխոզ, եւ դա այն շերտն է, որը մոտ է Ալիեւի կլանին:

Կատարվածը Ադրբեջանի մտավորականության շրջանում հարուցեց բողոք ու վրդովմունք: Ադրբեջանական հասարակության այդ շերտը Ալիեւի արարքը չընդունեց, ինչպես եւ Հունգարիայի բնակչությունը:

Պարոն Խուդոյանը նշում է, որ Հունգարիայի կառավարությունն էլ իր հերթին իր հակառակորդներին շարժառիթ տվեց: Իսկ հունգարացիները, որոնք արդեն հանդես են եկել հայտարարությամբ, իրենց երկրի համար Ռամիլ Սաֆարովի էքստրադիցիան համարում են խայտառակություն:

Կրկին վերադառնալով ադրբեջանական կողմի՝ հաղթող երեւալու մոլուցքին, որը նրան ոչ մի կերպ չի հաջողվում, Սամվել Խուդոյանն ասում է՝ այս դեպքում էլ Ադրբեջանն ուզում էր ցույց տալ, որ իրենք հաղթեցին: Բայց հետեւանքը եղավ այն, որ վարկաբեկվեց Ադրբեջան պետությունը եւ արհամարհվեց նրանց ստեղծած հերոսը, որը, անկախ ամեն ինչից, փայլուն կերպով ներկայացնում է հանցագործ պետության հավաքական կերպարը: Սաֆարովի հերոսացումն ու ազատությունը չընդունեց եւ մահմեդական աշխարհը, քանի որ դա ուղղակիորեն հակասում է Ղուրանի պատվիրաններին:

Հայերի ու ադրբեջանցիների միջեւ պայքարը շարունակվում է ոչ միայն իրական, այլեւ վիրտուալ աշխարհում, բայց այստեղ արդեն հաքերների մակարդակով: Երեկվա ասուլիսին ներկա տեղեկատվական անվտանգության փորձագետ **Սամվել Մարտիրոսյանը** նշում է, որ վերջին մի քանի օրում ադրբեջանցիները հայկական կայքերը կոտրելիս ավելի շատ աշխատել են ոչ թե որակի, այլ քանակի վրա: Հայկական կողմն արել է հակառակը՝ կոտրելով ադրբեջանական պետական ու լրատվական կայքերը, ադրբեջանցիներին հայկական լրատվական ու պետական կայքերը կոտրել չի հաջողվել: Ադրբեջանցիները կոտրել են այն, ինչ ձեռքերի տակ ընկել է, եւ կարողացել են կոտրել քաղցկեղով հիվանդ երեխաներին ու մանկատան երեխաներին օգնելու հայկական կայքերը:

Մինչ Սաֆարովի էքստրադիցիան ադրբեջանցիները պարբերաբար կոտրում էին հայկական կայքերը՝ շաբաթական մի քանիսը, հայկական կողմից պատասխան քայլեր իհարկե եղել են: Սակայն կոտրելիս պետք է ավելի շատ աշխատել բովանդակային կայքերի ուղղությամբ, որոնք պետական են կամ քաղաքականության համար կարեւոր են:

Իսկ վերջին օրերին կիբեռտարածքում հայ հաքերներից պաշտպանվելու համար շատ սերվերներ ադրբեջանցիները ստիպված են եղել արգելափակել:

**Ի. Պ.**



# Պատասխան նամակ խմբագրությանը

**Հարգարժան խմբագրություն**

**Սիրով ծանոթացա Ձեր թերթում (31 օգոստոսի 2012 թ.) տպագրված Արտեմ Դավթյանի «Պետք է վերացվի անջրպետը համայնքի ղեկավարի եւ բնակչի միջեւ» հոդվածում Այգեստանի գյուղապետի թեկնածուի արտահայտած մտքերին:**

**Սկզբից ասեմ, որ յոթ տասնյակս բոլորած, երեք համալսարանի դիպլոմ ունեցող, նախկինում ինժեներ, իրավախորհրդատու, դասախազ աշխատած, երկու գրքի հեղինակ Սոկրատ Հովսեփյանս ստիպված եմ անդրադառնալ նրա որոշ մտքերին, որոնք անձնական վիրավորանք են պարունակում իմ հասցեին: Պարզապես զարմանում եմ, որ միշտ զուսպ կեցվածք դրսեւորած Ձեր թերթը տպագրել է նրա զազրախոսությունները:**

**Ասեմ, որ 70 տարեկան ծերունս ամբողջական որեւէ պրոբլեմ չունի, այդ մասին նա քաջ տեղյակ է: Տղամարդկային ոչ մի որակ չեմ կորցրել առ այսօր:**

**Գյուղապետության չորս տարիներին գյուղում իմ ղեկավարությամբ կատարվել են այնքան մեծ ծավալի աշխատանքներ, որը չեն կատարվել անգամ խորհրդային 70 տարիների ընթացքում:**

**Միայն թվեր՝ անցկացվել է 18 կմ խմելու ջրագիծ, վերանորոգվել են մանկապարտեզը, գյուղապետարանի շենքը, գրադարանը, մշակույթի տունը: Անցկացվել է 3 կմ գազատար եւ այլն: Կարճ կապեմ, գյուղում կատարվել է մոտ 170 միլիոն դրամի աշխատանք, իսկ բյուջեից չի օգտագործվել եւ ոչ մի լումա, այն էլ ասեմ, որ դրսից էլ որեւէ լումա օգնություն չի եղել:**

**Ավագանու նոր ընտրության ժամանակ ՀՀԿ-ի կողմից (մի՞թե որեւէ մեկը բռնել էր Դավթյանի ձեռքից, որ 19 թեկնածու էլ իր կուսակցությունն առաջադրեր) առաջադրել է 9 թեկնածու, որից միայն մեկն է ՀՀԿ-ի անդամ՝ Անուշ Գրիգորյանը:**

**Ոռոգման ջրի հարցով կասեմ, թե այդ բնագավառում եղած պրոբլեմները ինչ արագությամբ են բարձրացվել ջրային պետական կոմիտեի նախագահ Ա. Անդրեասյանի առջեւ եւ այդ բնագավառում երկու հանցագործների նկատմամբ իմ դիմումի հիման վրա են Արտաշատի ոստիկանության բաժնում նյութեր նախապատրաստվել եւ 600 հազարի չափով վերականգնվել պետությանը պատճառած վնասը:**

**Ինչ վերաբերում է իմ հողերի ջրելուն, ասեմ: Ես գյուղում ունեմ իմ եւ երեխաներիս անունով 2 հա հող, որից 0,2-ը սեփականաշնորհված է, իսկ մնացածը գնել եմ:**

**Արտե՛մ, դու երբեւէ կով պահե՞լ ես, կովի տակ մաքրե՞լ ես, հող փորե՞լ ես, ջուր արե՞լ ես, խոզի տակ մաքրե՞լ ես: Իսկ ես այդ ամենն արել եմ, երբ դատախազ էի: Արտե՛մ, չկա գյուղացի, որ իմ կաբինետն ազատ չմտնի, ինձնից խորհուրդ, օգնություն չստանա:**

**Արտե՛մ, սեպտեմբերի 7-ին, ժամը 19-ին քեզ հրավիրում եմ Մշակույթի տան բակում իմ կողմից կազմակերպվելիք հանրահավաքին:**

**Ե՛կ եւ եթե բան ունես ասելու, ազատ արտահայտվի՛ր:**

**Հանրահավաքից թող երեւա, թե ո՞վ ով է:**

ՍՈԿՐԱՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Այգեստանի գյուղապետ,
գյուղապետի թեկնածու

*(Նամակը հրատարակվում է որոշ կրճատումներով - ծ. խ.)*

# Հնդկահայ համայնքի բողոքն ընդդեմ Հունգարիայի կառավարության



**2012 թվականի սեպտեմբերի 4-ին Հնդկաստանի հայ համայնքն իր ընդվզումն ու բողոքի ձայնը բարձրացրեց Կալկաթայում Հունգարիայի հյուպատոսության առջեւ՝ Հունգարիայի իշխանությունների կողմից Ռամիլ Սաֆարովին պաշտոնական Բաքվին անօրինական արտահանձման եւ Ադրբեջանի նախագահի կողմից նրան ազատություն շնորհելու համար: Համայնքի կողմից բողոքի նամակ հանձնվեց Կալկաթայում Հունգարիայի հյուպատոսությանը:**

**Հնդկահայոց հոգեւոր հովիվ, Հայոց մարդասիրական ճեմարանի կառավարիչ Հոգեշնորհ Տեր Խորեն վարդապետ Հովհաննիսյանն իր նամակում ի մասնավորի գրել է. «Մարդկային կյանքն աստվածապարգեւ է: Կանխամտածված սպանությունը հանցանք է մարդկության եւ Աստծո դեմ: Հանուն հնդկահայության մենք պահանջում ենք, որ Հունգարիայի կառավարությունը ներողություն խնդրի հունգարական դատարանի կողմից ցմահ դատապարտված դաժան մարդասպանի ազատության մեջ հայտնվելու համար: Այս անընդունելի որոշումը ոտնահարում է մարդու իրավունքները, արդարությունը, մարդկային արժանապատվությունը եւ մերժում է աստվածային օրենքը երկրի վրա»:**

**Նամակը հյուպատոսին հանձնելիս Հայր Խորենը խոր վրդովմունք հայտնեց եւ ասաց, որ եթե վերջինս այդ անարդար արտահանձման դեմ ընդվզի եւ, ի նշան բողոքի, հրաժարական տա, ապա կդառնա իր հերոսը:**

# Հոլանդահայ ֆեդերացիան դատապարտում է Հունգարիայի գործարքը




Հոլանդահայ կազմակերպությունների ֆեդերացիան տարածել է հաղորդագրություն, որով պահանջում է մարդասպան Սաֆարովին հետ ուղարկել պատիժը կրելու: Ֆեդերացիան գրավոր հարցեր է ուղղել Հոլանդիայի արտգործնախարարին, դիմել Հոլանդիայի կառավարությանն ու խորհրդարանին՝ խնդրելով դատապարտել Հունգարիայի որոշումը՝ Ռամիլ Սաֆարովին Ադրբեջանին արտահանձնելու վերաբերյալ:

Հաղորդագրությունում նաեւ ասվում է, որ Հունգարիայի ու Ադրբեջանի գործողությունները հակասում են ԵԱՀԿ Մինսկի խմբի ջանքերին ու բորբոքում Հայաստանի ու Ադրբեջանի միջեւ լարվածությունը:

Հոլանդահայ ֆեդերացիան կոչ է անում միջոցներ ձեռնարկել, որպեսզի Սաֆարովը կրի իր պատիժը: Սա միակ ճանապարհն է կասեցնելու լարվածության ուժեղացումը: Իսկ կառավարությանը դիմելով հոլանդահայ ֆեդերացիան պահանջում է, որ թե՛ երկկողմանի, թե՛ ԵՄ հարաբերությունների շրջանակում դատապարտվեն Հունգարիայի ձեռնարկած արտահանձնումը եւ Սաֆարովի մեծարումն Ադրբեջանում:

Իսկ այսօր տեղի կունենա բողոքի ցույց Հաագայում՝ Հունգարիայի դիվանագիտական ներկայացուցչության դիմաց, արտահայտելու համար դժգոհությունը կատարված գործարքի նկատմամբ:

**Ի. Պ.**

# Յարոմիր Շտետինա. Սաֆարովի հանձնումը ոչ միայն Հունգարիայի, այլեւ Եվրոմիության գործն է

*1-ին էջից*

**Նավթի հոտն ավելի ուժեղ կարող է լինել, քան պատմական արդարության էությունը: Սա ուղղակի անբարոյական բիզնես է»:**

**Չեխական կառավարությունը դեռ պաշտոնական որեւէ դիրքորոշում չի հայտնել, բայց նախորդ օրը Չեխիայում Հայաստանի դեսպան Տիգրան Սեյրանյանի հետ հանդիպման ժամանակ Չեխիայի ԱԳՆ Եվրոպայի ընդհանուր դեպարտամենտի գլխավոր տնօրեն Յարոսլավ Կուրֆյուրստը փոխանցել է իր երկրի պաշտոնական տեսակետը, այն է. «Չեխիայի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունն իր խոր մտահոգությունն է արտահայտում Ռամիլ Սաֆարովի ներման եւ հերոսացման կապակցությամբ: Չեխական կողմը բարձր է գնահատում ԵԱՀԿ Մինսկի խմբի եռանախագահների միջնորդությամբ Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ հանգուցալուծմանն ուղղված բանակցությունները շարունակելու Հայաստանի հավատարմությունն ու ջանքերը»: Հայաստանին իր զորակցությունն է հայտնել նաեւ վերջերս չեխական խորհրդարանում ձեւավորված Չեխ-հայկական բարեկամության խումբը: Դեսպանի ասելով, Հայաստանի դեսպանությունը շարունակում է աշխատանքներ տանել այս խնդիրը խորհրդարանում քննարկելու ուղղությամբ:**

**Չեխահայ համայնքն իր հերթին արդեն ստացել է Հունգարիայի դեսպանության առջեւ ցույց անելու թույլտվությունը, եւ շաբաթավերջին չեխահայերը նույնպես կբարձրացնեն իրենց բողոքի ձայնը:**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԱ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960
060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

“AZG” Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Անցուդարձ

# Մրցունակության աճ 10 կետով եւ 82-րդ տեղ 144 երկրների մեջ

## *Որո՞նք են Հայաստանի ուշագրավ առավելություններն ու թերությունները մրցունակության համաշխարհային զեկույցում*

2012-2013-ի մրցունակության համաշխարհային զեկույցն ու Հայաստանի ցուցանիշներն ըստ այդ զեկույցի երեկ «Նովոստի» մամուլի ակումբում ներկայացրին «Տնտեսություն եւ արժեքներ» կենտրոնի խորհրդի անդամ **Սեւակ Հովհաննիսյանը** եւ կենտրոնի աշխատակից **Սոնա Գրիգորյանը**:

Սեւակ Հովհաննիսյանը մասնավորապես հայտնեց, որ, համաձայն այդ զեկույցի, Հայաստանը 10 կետով առաջընթաց է արձանագրել եւ այժմ զբաղեցնում է 82-րդ տեղը 144 երկրների մեջ: Նա նշեց, որ Հայաստանն այս զեկույցում ընդգրկվել է 2005-ից, ապա անդրադարձավ համաշխարհային տնտեսության իրավիճակին:

Ըստ «Տնտեսություն եւ արժեքներ» կենտրոնի խորհրդի անդամի՝ համաշխարհային տնտեսությունը գտնվում է անկայուն եւ անորոշ վիճակում: Եվրոգոտու խնդիրները հանգեցրել են պարտքային ճգնաժամի եւ եվրոգոտուց դուրս շուկաների դանդաղ վերականգնման: Ինչ վերաբերում է մրցունակության համաշխարհային զեկույցին, ապա այն գնահատվում է 100 գործոններով եւ 12 հենասյուներով: Նկատի են առնվում նաեւ երկրի տնտեսական զարգացման փուլերը: Դրանք երեքն են՝ ռեսուրսների վրա հիմնված, արդյունավետության վրա հիմնված եւ նորարարությունների վրա հիմնված: Հայաստանը անցյալ տարի նահանջել էր եւ գտնվում էր առաջին փուլում, հիմա նորից հայտնվել է երկրորդ՝ արդյունավետության վրա հիմնված փուլում, որտեղ տարեկան 3000-9000 դոլար 1 շնչին ընկնող ՀՆԱ ունեցող երկրներն են:

Աշխարհի առավել մրցունակ 15 երկրները այս զեկույցում մնացել են անփոփոխ: Փոխվել են միայն նրանց տեղերը այդ ցանկի ներսում: Առաջին տեղում Շվեյցարիան է, երկրորդում՝ Սինգապուրը, երրորդում՝ Ֆինլանդիան:

12 հենասյուներից, Հայաստանը, նախորդ զեկույցի համեմատ, առաջընթաց է արձանագրել ինստիտուտների, մակրոտնտեսական կայունության, առողջապահության եւ տարրական կրթության, բարձրագույն կրթության եւ վերապատրաստման, ապրանքների շուկայի արդյունավետության, ֆինանսական շուկայի զարգացածության, գործարար կատարելագործվածության, նորարարության հենասյուներում, հետընթաց՝ ենթակառուցվածքների, տեխնոլոգիական պատրաստվածության, եւ անփոփոխ է մնացել շուկայի չափը:

Ամենաուշագրավ դրական փոփոխություններից նշվեցին պետական քաղաքականության մշակման գործընթացի թափանցիկության, շուկայում գերիշխող ուժերի առկայության, նոր բիզնես սկսելու համար պահանջվող օրերի քանակի եւ ընթացակարգերի քանակի, հակամենաշնորհային քաղաքականության արդյունավետության գործոններով: Բացասական փոփոխություններից ուշադրության արժանի է ինտերնետ օգտագործողների թվի ցուցանիշը, որի առնչությամբ, սակայն, Սեւակ Հովհաննիսյանը հայտնեց, որ հիմք է ընդունվել Միջազգային հեռահաղորդակցության միության 2009-ի ցուցանիշը:

Մի շարք առումներով, Հայաստանը, այնուամենայնիվ, զբաղեցնում է բավականին ցածր տեղեր: Մեր երկրի ուշագրավ թերություններից են՝ տեղական մրցակցության ուժգնությունը՝ 130-րդ տեղ, մաքսային գործընթացների բեռը՝ 127-րդ տեղ, բիզնեսի կրթությունը՝ 127-րդ տեղ, արտասահմանյան շուկաների ինդեքսը՝ 122-րդ տեղ եւ այլն:

ԱՊՀ երկրներից Ադրբեջանը զբաղեցնում է 46-րդ տեղը՝ 9 կետով առաջընթաց գրանցելով, Ղազախստանը՝ 51-րդ տեղը՝ 21 կետով առաջընթացով, Ռուսաստանը՝ 67-րդ տեղը՝ 1 կետով հետընթացով, Ուկրաինան՝ 73-րդ տեղը՝ 9 կետով առաջընթացով, Վրաստանը՝ 77-րդ տեղը՝ 11 կետով առաջընթացով, Մոլդովան՝ 87-րդ տեղը՝ 6 կետով առաջընթացով, Տաջիկստանը՝ 100-րդ տեղը՝ 5 կետով առաջընթացով եւ Ղրղզստանը՝ 127-րդ տեղը՝ 1 կետով հետընթացով:

Ամփոփելով, Սեւակ Հովհաննիսյանը նշեց, որ Հայաստանի մրցունակության առանցքային զարգացումներն են մակրոտնտեսական միջավայրի կատարողականի բարելավումը (կառավարելի պետբյուջեի դեֆիցիտ եւ արտաքին պետական պարտք), հակամենաշնորհային քաղաքականության ակտիվացումը: Սակայն կոռուպցիան, մաքսային վարչարարությունը, դատական համակարգի անկախության ցածր մակարդակը, պետության կողմից նորարարության խթանման բացակայությունը բացասաբար են անդրադառնում երկրի մրցունակության վրա:

Մասնավոր հատվածում Հայաստանի մրցունակության հիմնախնդիրներն են՝ տրանսֆորմացիայի ցածր մակարդակը, բիզնեսի կատարելագործվածության, նորարարության եւ տեխնոլոգիական պատրաստվածության ցածր մակարդակը: Առավել խնդրահարույց գործոններն են մարկետինգը, կորպորատիվ կառավարումը, բիզնես գործընթացների կատարելագործվածությունը, լիազորությունների պատվիրակումը, հետազոտությունների եւ մշակումների ծախսերը, անձնակազմի վերապատրաստումը:

«**Ազգի**» հարցը՝ ուղղված Սեւակ Հովհաննիսյանին, հետեւյալն էր. «Ինչո՞ւ մրցունակության ցուցանիշի հաշվարկման ժամանակ հաշվի չի առնվում այնպիսի կարեւոր հանգամանք, ինչպիսին տնտեսության դիվերսիֆիկացման ցուցանիշն ու նրա փոփոխություններն են»: Ստացանք «դա ավելի շատ հետեւանքային գործոն է» պատասխանը, որն, ըստ էության, չի կարելի համոզիչ ու փաստարկված համարել:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# Ընթերցողները արձագանքում են ու շնորհակալություն հայտնում

Օրեր առաջ «**Ազգն**» անդրադարձել էր իր ընթերցողների ահազանգին, Նոր Նորքի վարչական շրջանի Գայի պողոտայի IV զանգվածի հատվածում գետնանցումներից անվտանգ երթեւեկելու եւ օգտվելու խնդրանքով: Ճանապարհային ոստիկանության պատասխանատուները «**Ազգի**» հետ եղան նշված հասցեում: Բնակիչների դժգոհությունները իրավացի էին: Եվ ահա երեկվանից այդ հատվածների շրջակայքում տեղադրվել են հատուկ նախազգուշացնող նշաններ եւ կարծես թե հետիոտնի երթեւեկը դարձել է ապահով: Վարչական շրջանի բնակիչները շնորհակալություն են հայտնում թերթին՝ նշելով «Երկար տարիներ այդ հարցը ոչ մի կերպ լուծում չէր ստանում: Իսկ այժմ մենք կարող ենք ապահով դպրոց ճանապարհել մեր երեխաներին, քանի որ գետնանցումներից անվտանգ կարող ենք օգտվել: Շնորհակալ ենք ու միշտ հավատում ենք, որ «**Ազգը**» մտահոգ է համաքաղաքացիներին հուզող խնդիրներով», գրված է նամակում:

Նամակագիրները խնդրել են, որ այս անգամ թերթը միջնորդի Նոր Նորքի վարչական շրջանի ղեկավարին եւ Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարյանին, «գոնե մեկ օդային անցում կառուցվի Նոր Նորքի «Սթար» եւ Կոլտնտեսային շուկայի դիմաց, քանի որ մեծամասամբ հայ կանայք գնումների ծանր տոպրակներով չեն կարող 400 մետր աջ կամ ձախ մասերում գտնվող անցումներից օգտվել: Այդ հատվածը շատ ծանրաբեռնված է մեքենաների հոսքով եւ միակ ճիշտ լուծումը (մանավանդ որ այդ հատվածի երկու մայթերը լայն են) օդային անցում կառուցելն է: Կարծում ենք, այս հարցն էլ կլուծվի թերթի միջամտությամբ», ավարտում են խմբագրությանս հղված նամակը:

Ս. Ս.

# «Տաշիր գրուպ»-ը հերքում է

**«Տաշիր գրուպ» ընկերությունը պաշտոնապես հերքել է Հայաստանում McDonald's արագ սննդի սպասարկման ռեստորանների ցանց բացելու լուրերը: Ինչպես «Արմենպրես»-ի հետ զրույցում նշեցին «Տաշիր գրուպ» ընկերության ռուսաստանյան գրասենյակի մամուլի ծառայությունից, ընկերությունը McDonald's-ի հետ նման պայմանագիր չի ստորագրել: Շրջանառվող տեղեկությունների համաձայն՝ «Տաշիր Գրուպը» ձեռք է բերել Երեւանում McDonald's ռեստորանների ցանցի հիմնման լիցենզիան:**

**«Տաշիր գրուպի» մամուլի ծառայությունից տեղեկացրին նաեւ, որ տվյալ պահին ընկերությունը զարգացնում է Grand Food հասարակական սննդի կետերի ցանցը, որի մեջ մտնում է նաեւ «Տաշիր պիցցա» ռեստորանների ցանցը: Ցանցն այսօրվա դրությամբ արդեն ներառում է 68 սպասարկման կետեր՝ Հայաստանում եւ Ռուսաստանում: Մամուլի ծառայության տվյալներով՝ մինչեւ 2012 թվականի ավարտը կբացվեն ավելի քան 20 պիցցերիաներ:**

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

# Երեւանի մետրոպոլիտենը արդիականանում է

**1981 թվականի մարտի 7-ից Երեւանում շահագործվեց մետրոն, որը տարիներ անց անվանվեց քաղաքական գործիչ, մեր երկրի երկարամյա ղեկավար Կարեն Դեմիրճյանի անվամբ: Անցել է շուրջ 31 տարի, եւ «Երեւանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ն երբեւէ չի դադարեցրել իր աշխատանքը, չնայած երեք տասնամյակի ընթացքում շատ սարքավորումներ հնացել են եւ մասնակի վերանորոգվել: Մայրաքաղաքի այդ կարեւոր փոխադրամիջոցի տնօրեն Փայլակ Հայլոյանի հետ «Ազգը» զրուցեց եւ խնդրեց տեղեկանալ, թե ինչ աշխատանքներ են տարվում մետրոպոլիտենի արդիականացման շուրջը եւ ովքեր են ֆինանսավորում այդ ծրագրերը:**

«Իրավացի եք, որ 31 տարի մետրոն շահագործելուց բնականաբար մեծ խնդիրներ առաջացած կլինեն, եւ պատահական չէ, որ մեր կառավարության աջակցությամբ ձեռնամուխ եղանք մետրոպոլիտենի վերականգնման ծրագիր կոչված միջոցառմանը, որը մեծ ներդրումներ է պահանջում: Կառավարության աջակցությամբ այդ ծրագիրը ֆինանսավորվեց՝ Եվրոպական զարգացման ու վերակառուցման բանկի եւ Եվրոպական ներդրումային բանկի եւ Եվրոմիության հարեւանության օգնության հանձնախմբի կողմից ներդրվեցին գրանտային միջոցներ»: Ընդհանուր թվում յուրաքանչյուրը ներդրել է 5 միլիոն եվրո, ծրագրի առաջին փուլով նախատեսված էր, ինչպես ասաց պրն Հայլոյանը, նոր տնտեսական գնացքների ձեռքբերում: Իսկ թե ինչ գործառույթ է իրականացնում տնտեսական գնացքը, տնօրենը պարզաբանեց. «Երբ մետրոն կեսգիշերին դադարեցնում է իր աշխատանքը, մինչեւ լուսաբաց տնտեսական գնացքը մտնում է գիծ եւ կատարում է վերանորոգման աշխատանքներ թունելներում, գծի ամրացման, շպալների փոխման: Մի խոսքով՝ գետնի տակ եղած տնտեսությունում, որը ուղեւորը չի տեսնում, այդ վեց ժամվա ընթացքում կատարում են սպասարկման աշխատանքներ, որից հետո միայն առավոտյան ժամը 6-ն անց 30-ից մետրոն իր դռներն է բացում ուղեւորների առջեւ՝ անվտանգ ու ապահով: Ահա այդ տնտեսական գնացքը, 60 հատ անվասայլակ ենք ձեռք բերել, գլխամասային բոլոր վագոնների տակ փոխարինվել են բոլոր անվասայլակները, փոխվել են 30 կմ բարձրավոլտ մալուխները, շարունակվում են 30 տարվա պատմություն ունեցող փայտակոճերը, որոնք վթարային վիճակում էին: Ծրագրի ավարտին փոխվելու են նաեւ ու արդիականացվելու են բոլոր պոմպակայանները՝ գրունտային ջրերի հեռացման նպատակով: Այս թվարկածս ծրագրի առաջին փուլին է վերաբերում, որի ավարտը կլինի 2013 թվին»:

«**Ազգի**» հաջորդ հարցը վերաբերում էր վերջերս կնքված նոր վարկային պայմանագրին եւ թե ինչ է նախատեսվում երկրորդ փուլով, տնօրենը պարզաբանեց. «Այո, նույն բանկերի կողմից, նույն չափաբաժնով (15 միլիոն եվրո- Մ. Մ.) ներդրումները կիրականացվեն 2013-ից, որում նախատեսված է դրենաժային թունելի շարունակություն, ինչպես գիտեք, 15 տարի այդ շինարարությունը մնացել է կիսատ «Զորավար Անդրանիկ» կայարանի հատվածում, եւ մյուս թունելների ջրամեկուսացման աշխատանքները պետք է շարունակվեն: Իհարկե, ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ փուլում հնարավոր են մեծ խնայողություններ, որոնք էլ կդրվեն կոնկրետ շարժակազմերի նորոգման, վագոնների արդիականացման խնդիրների լուծման վրա»:

«**Ազգը**» փորձեց տեղեկանալ, թե ինչ աշխատանքներ են տարվում մետրոյի նոր կայարաններ կառուցելու շուրջը, որպեսզի քաղաքի կենտրոնը բեռնաթափվի, ծայրամասերում բնակվողների երթեւեկը հեշտանա, եւ որ ամենակարեւորն է, լուծվի օդի աղտոտման կանխման հարցը: «Նման ծրագիր դեռ 30 տարի առաջ ներկայացվել է, դրանց շուրջը անընդհատ խոսում ենք, անընդհատ հարց է բարձրացվում, սակայն այդ հարցը ֆինանսական մեծ ներդրումներ է պահանջում, որը այսօր մենք դժվարանում ենք լուծել»: Իհարկե շատ լավ կլիներ, որ նոր կայարաններ բացվեին, սակայն պարզից էլ պարզ է, որ բարդ ու դժվարին է գումարներ հայթայթել, երբ մոտավոր հաշվարկով միայն «Աջափնյակ» կայարանի ա-



նավարշինարարությանը անհրաժեշտ է 100 միլիոն դոլար: Իհարկե, հարցը օրակարգում է, եւ ինչպես ասաց պրն Հայլոյանը, քաղաքապետի հանձնարարությամբ բանակցություններ են վարել տարբեր միջազգային կազմակերպությունների հետ:

Իսկ մետրոյի արժեքի կրկնակի դարձնելը օգնե՞ց, թե՞ վնասեց եւ արդյոք ուղեւորների թիվն էլ նվազեց՝ պարոն Հայլոյանը ասաց. «Մետրոյի սակագինը 100 դրամ դարձնելը միայն օգուտ բերեց: Եկամուտներն ավելացան, եւ դրանք դրվում են մետրոպոլիտենի կայարանների աշխատանքների, շարժասանդուղքների, վագոնների նորոգման, ինժեներական կառույցների արդիականացման, մի խոսքով՝ անվտանգության խնդիրների վրա»: Այսօր մետրոպոլիտենում աշխատում են 1150 մարդ, որոնց միջին աշխատավարձը կազմում է 117.000 դրամ: Այսօր արդեն մետրոյի գնացքները աշխատում են ամբողջովին էլեկտրոնային համակարգով, 10 կայարաններում տեղադրված են տեսախցիկներ, որոնցով շուրջօրյա հսկվում է մետրոյի եւ ուղեւորների շարժը: Նոր վագոնները շատ հարմարավետ են եւ աշխատելու են համակարգիչներով, սեպտեմբերի 1-ից 6 այդպիսի վագոն կմտնի շարժակազմ:

«**Ազգի**» հարցին՝ արդյոք գրանցվե՞լ են գողություն, գրպանահատում եւ այլ հանցագործություններ, տնօրենը միանշանակ ասաց, որ որեւէ դեպք չի գրանցվել եւ մետրոյի կայարաններում 180 ոստիկաններ անվտանգությունը ապահովում են: Մեկ նորություն էլ՝ մետրոյի կայարաններում՝ արդեն տեղադրվել են նստարաններ պլատֆորմի վրա (Երիտասարդական կայարան), եւ այդ լավ գործը կշարունակվի ու կգեղեցկացվի նաեւ ծաղիկներով, պատմում է մետրոպոլիտենի տնօրենը եւ իր աշխատավայրից էկրանի վրա հսկում էր մետրոյի 10 կայարանների տվյալ պահի շարժը: Իսկ օրվա ողջ շարժը ձայնագրվում է ու պահվում է 15 օր: Հուսանք, որ կգտնվեն ֆինանսներ եւ կկառուցվեն նոր կայարաններ, որը երեւանցիների վաղեմի երազանքն է, հատկապես ծայրամասերի բնակիչների:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

# Բաց նամակ Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդին

## *Գուրգեն Մարգարյանը ոտք դրեց անմահություն որպես սուրբ նահատակ*

**Ձե՛րդ սրբազնություն**։ Ցանկանում եմ անկեղծորեն խոստովանել, որ Բուդապեշտում տեղի ունեցած հրեշավոր ողբերգությունը (2004 թվական) եւ ապա անմեղ զոհին լկտիաբար վիրավորելը՝ մարդասպանի կերպարի հերոսականացմամբ (2012 թվական), անձամբ ինձ բոլորովին չզարմացրին։ Ղարաբաղյան շարժման «պաշտոնական» սկզբից դեռեւս շատ առաջ մենք բազմաթիվ անգամներ ականատես ենք եղել ադրբեջանական մարդասպանների կողմից հայերի նկատմամբ իրագործված նման բազմաթիվ անպատիժ հանցագործությունների։ Ընդգծեմ, որ այն ժամանակ էլ ամենից հաճախ գործի էին դրվում կացիններ ու դանակներ։ Կբերեմ ընդամենը մի քանի օրինակ Ղարաբաղյան շարժման իմ զինակիցների կողմից Կրեմլ ուղղված գրքերից եւ նամակներից։

Դաշքեսանի շրջանի (Գարդմանք) Բանանց գյուղում ադրբեջանցի բարբարոսները ավերեցին Հայրենական մեծ պատերազմի տարիներին զոհված համագյուղացի հայերին նվիրված աննման հուշարձանը եւ գիշերով դրա փլատակների վրա նետեցին կացնահարված հայի դիակը։ Մարտունու շրջանում (Արցախ) օրը ցերեկով ուղղակի ցանքի դաշտում կացնով սպանեցին ութսունամյա հային։ Մարդասպանները կալանավորվեցին հայ միլիցիոներների կողմից, բայց նույն օրն էլ ազատ արձակվեցին Բաքվի կարգադրությամբ։ Տասնվեցամյա աղջկան աղդամցի տականքները ենթարկեցին խմբային բռնաբարության, դանակի բազմաթիվ հարվածներ հասցրեցին եւ մեռած մարմինը նետեցին պատերազմում զոհվածներին նվիրված հուշահամալիրի Անմար կրակին։ Մարդասպաններից ոչ մեկը չդատապարտվեց։ Ընդհանրապես նույնիսկ քրեական գործ չհարուցվեց, չնայած Արցախի հայերի բազմաթիվ պահանջներին ու բողոքներին։

Արցախի Կարադողլու գյուղում ադրբեջանական դպրոցի գյուղական ուսուցիչը եւ իր հանցակիցների խումբը կացնով սպանեցին ութ տարեկան տղային միայն այն պատճառով, որ նա հայ էր։ Նորմալ մարդուն անհավատալի կթվա, բայց ադրբեջանցի ուսուցիչը արդեն մեռած երեխայի աչքերն էլ հանեց։ Այս անգամ մարդասպաններին բռնեցին, սակայն Ադրբեջանական ԽՍՀ-ի ՊԱԿ-ի այն ժամանակվա նախագահի Հ. Ալիեւի անձնական ցուցումով արյունալի սադրանք կազմակերպվեց Ստեփանակերտում բացօթյա դատալսման ժամանակ, սպանվեց հանցագործ խմբի ղեկավարը, իսկ տասնյակ հայ երիտասարդներ դատապարտվեցին մահապատժի եւ տասնհինգ տարվա ազատազրկման։

Ավա՜ղ, այս ողբերգական ցանկը կարելի է երկար շարունակել։ Եվ հասկանշական է, որ իրոք, դեպքերի մեծամասնությամբ ադրբեջանցիների մոտ միշտ սպանության գործիք են եղել կացինները՝ խորհրդանշելով թուրքական յաթաղաններ։ Բացառություն չէր նաեւ գազանային սպանությունների միջոցը՝ Սումգայիթում եւ Բաքվում հայերի ցեղասպանության ժամանակ։

Սումգայիթյան զանգվածային ջարդերից անմիջապես հետո դեռեւս գործող խորհրդային իշխանությունը քրեական գործեր հարուցեց ընդդեմ հարյուրավոր ազերի մարդասպանների։ Եվ ելնելով անվտանգության նկատառումներից, բոլոր դատաքննությունները անցկացվում էին ոչ թե Ադրբեջանում, այլ ԽՍՀՄ-ի շատ քաղաքներում, այդ թվում՝ նաեւ Մոսկվայում։ Այն ժամանակ, լինելով ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր, ես կազմակերպեցի պատգամավորական խումբ, եւ մշտապես ներկա էինք դատական նիստերի դահլիճներում։ Անհնար է նկարագրել այն ամենը, ինչ տեսանք եւ լսեցինք։ Համարյա բոլոր զոհերը խոսում էին կացինների մասին։ Ի դեպ, հիշեցնեմ, որ բոլոր չարագործներին եւ ջարդարարներին, դեռեւս մինչեւ ԽՍՀՄ-ի վերջնական փլուզումը, ազատ արձակեցին, եւ նրանց Բաքվում դիմավորեցին որպես իսկական հերոսների։ Այդպես էլ կոչում էին՝ «Սումգայիթի հերոսներ», «Բաքվի հերոսներ»։ Այնպես որ, իրոք, ոչ մի զարմանալի բան չկար, որ վախկոտ դահիճը քնած հային սպանեց կացնով։

Սակայն հիմա մեզ առաջին հերթին պետք է հուզի Գուրգեն Մարգարյանի ճակատագիրը։ Դա շատ կարեւոր հարց է։ Նրան սպանողը, որի սպայական կոչումը բարձրացրին, որը դարձավ համաժողովրդական հերոս, կուռք եւ գործուն օրինակ՝ ադրբեջանական երիտասարդության համար, ողջ աշխարհի աչքի առջեւ պսակ դրեց Ալիեւի շիրմաքարին, որն իր որդու հետ բազմիցս ցուցադրաբար եւ թատերայնորեն ծաղիկներ էր դրել «Սումգայիթի հերոսների», «Բաքվի հերոսների» գերեզմաններին։ Եվ այդ ողջ մարտատենչ ցինիզմն այսօր զգում է Գուրգենի հոգին։

Այս օրերին Գուրգենն օբյեկտիվորեն սուրբ դարձավ մեր ժողովրդի համար։ Քայլեց անմահություն։ Իսկ նա, ով մարդասպանի համար ներման հրամանագիր ստորագրեց, ի՛նքը դարձավ դահիճ, որի ձեռքը չի կարող սեղմել մոլորակի ոչ մի բարոյական բնակիչ։ Եվ հիմա, երբ այդ դահիճը հերթական անգամ Ղարաբաղյան կարգավորման Մինսկի խումբը գլխավորող երկրների ղեկավարների հանդիպման ժամանակ երդվի, թե Ադրբեջանը լայն լիազորություններ եւ երաշխիքներ կտա Արցախի անվտանգությանը, ապա նրանք առաջին հերթին պետք է մտածեն Գուրգեն Մարգարյանի ճակատագրի մասին։ Նրանք պետք է իմանան, որ այդ մարդու անունն ու ճակատագիրը այսուհետեւ գործուն փաստարկ են լինելու՝ ապացուցող եւ հաստատող, որ հայերը չէին կարող չսկսել փրկիչ պատերազմ հանուն Արցախի (ոչ միայն ԼՂԻՄ-ի) ազատագրման, եւ որ նրանք պարզապես դատապարտված էին հաղթանակի։

Ձե՛րդ սրբազնություն։ Կիսելով մեր շատ ու շատ հայրենակիցների ահռելի ցանկությունը, կամենում եմ համոզմունք հայտնել, որ ստեղծված բարդ իրավիճակում խստիվ անհրաժեշտություն կա, որ Հայ առաքելական եկեղեցին անմեղ նահատակ հռչակի Աստծո զավակ Գուրգեն Մարգարյանին։ Դա պետք է մեզ բոլորիս։

Դա կլինի ոչ միայն քրիստոնեաբար, արդարացի, այլեւ, ժողովրդական լեզվով ասած՝ ճիշտ։

**Խորին հարգանքով՝**
**Զորի ԲԱԼԱՅԱՆ**
**Ստեփանակերտ**

# Ծրագիր Գյումրու զարգացման համար

## *Առաջարկում է «Քաղաքը մերն է» քաղաքացիական նախաձեռնությունը*

**ՏԻՄ-ի սեպտեմբերի 9-ի ընտրությունների նախաշեմին, սրանից ամիսներ առաջ, Գյումրու բարեփոխման «Քաղաքը մերն է» քաղաքացիական նախաձեռնության ծնունդը, նրա անդամներից համայնքային նոր ավագանու անդամության թեկնածուների յոթհոգանոց միասնական թիմի եւ Գյումրու զարգացման միասնական ծրագրի ստեղծումը կարող են մեզանում նոր մշակույթի ձեւավորման հիմք դառնալ։ Անշուշտ՝ եթե հասարակությունն ինքը պատրաստ լինի դրան եւ ընդառաջ քայլ անի ընտրություններում։**

**Գյումրու զարգացման այս ծրագիրն, այսպիսով, «Քաղաքը մերն է» նախաձեռնության ընդհանուր եւ ավագանու անդամության նրա յոթ թեկնածուների նախընտրական ծրագիրն է։ Նրա նախաբանում մասնավորապես նշվում է, որ քաղաքացիական նախաձեռնությունը գալիս է ավագանու աշխատանքի որակը բարելավելու եւ արդյունավետ կառավարում ապահովելու, տեղական ինքնակառավարման որակապես նոր մշակույթ ձեւավորելու համար։ Իսկ ծրագիրը, ինչպես նշում են հեղինակները, պարունակում է Գյումրու առաջիկա 15-20 տարիների հիմնական մարտահրավերների պատասխանները՝ այնպես, ինչպես իրենք զորել են մշակել։ Այդ խիստ ծավալուն փաստաթղթի գեթ առանձին կարեւոր հարցադրումներ փորձենք հակիրճ ներկայացնել։**

### Տնտեսություն

**Զորու մասից կազմված այս ծրագրի հայեցակարգային ուղղություններից են բյուջեն ինքնահոսայինից ծրագրային դարձնելու գաղափարը, մարդակենտրոն քաղաքային մշակույթի եւ կյանքի կառուցումը, բնակավայրի կենտրոնի ու մյուս թաղամասերի կենսական միջավայրի կոնտրաստի նվազեցումը, արտաքին կապերի զարգացումն ու քաղաքի սնուցման այլընտրանքային աղբյուրների ձեւավորման խնդիրները։**

**Տնտեսությանը վերաբերող առաջին մասում նշվում է, որ Գյումրու բնակչության արտագաղթի հիմնական պատճառներից մեկը արդյունաբերության աղետալի վիճակն է։ 1980-ական թվականներին քաղաքի տնտեսությունում զբաղվածների թիվը 75 հազարից ավելի է եղել, այդ թվում 45 հազարն աշխատել են արդյունաբերական ձեռնարկություններում։ Նշված տարիներին Հայաստանի արդյունաբերության համախառն արտադրանքի 8 տոկոսը բաժին է ընկել այս քաղաքին, իսկ 21-րդ դարի սկզբին այդ ցուցանիշը կազմել է 1,5 տոկոսը։ Երբեմնի տեքստիլագործների, ինժեներների ու շինարարների քաղաքը վերածվել է առեւտրավաճառաշահական բնակավայրի։**

**Ծրագրի հեղինակները հարկ են համարում համագործակցության շրջանակներում գործնական քայլեր ձեռնարկելու հնարավորություն են տեսնում քաղաքի մասնավորապես սննդի, թեթեւ, շինանյութերի արդյունաբերության եւ մեքենաշինական մի քանի ձեռնարկություններ որոշակի ծավալներով վերաշահագործելու համար։ Նախատեսվում է ավագանու եւ քաղաքապետարանի նախաձեռնությամբ, Շիրակի ու հանրապետության լավագույն տնտեսագետների հետ համատեղ 2013 թվականին մշակել արդյունաբերության զարգացման համալիր ծրագիր, որից հետո ՏԻՄ-ը դիմելու է հանրապետության կառավարությանը եւ հնարավոր դոնորներին ու շահագրգիռ գործարարներին՝ համատեղ ֆինանսական ներդրումներ կատարելու առաջարկներով։ Մյուս կողմից, համայնքային բյուջեում ավագանին որոշակի գումար պետք է հատկացնի քաղաքի տեղական արդյունաբերությունը խթանելու, մասնավորապես՝ կոոպերացիոն արտադրության զարգացման համար։ 1920-ական թվականներին, ինչպես նշվում է, Գյումրին ներկայիս համեմատ ավելի վատ վիճակում է եղել, սակայն տեղական արդյունաբերության զարգացման շնորհիվ կարողացել է կարճ ժամանակում դուրս գալ սոցիալ-տնտեսական ճգնաժամից։ Նախատեսվում է ուսումնասիրել եւ քննարկել ձեռնարկությունների տեղական հնարավոր արտոնությունների, այդ թվում ավագանու իրավասությունների շրջանակներում հողի հարկի եւ գույքահարկի չափերի փոփոխության, քաղաքում գործարարության զարգացման համայնքային հիմնադրամ ունենալու նպատակահարմարությունը, Գյումրիում բացել առեւտրաարդյունաբերական պալատ, որի նպատակը կլինի մարզում արտադրված ապրանքների իրացման խնդիրներով զբաղվելը։**

**Բավական ուշադրություն է նվիրվում արտադրական ենթակառուցվածքներին։ Ի թիվս բազմաթիվ այլ միջոցառումների, առաջարկվում է քաղաքային ավտոկայանի վերակառուցում կամ տեղափոխում Կայարանամերձ հրապարակ, միջպետական եւ հանրապետական մայրուղիների երթուղիների փոփոխություն, որպեսզի դրանք շրջանցեն քաղաքի կենտրոնական հատվածը։ Քաղաքաշինության բաժնում կարեւորված են, մասնավորապես, «Կումայրի» պատմաճարտարապետական արգելոց-թանգարանի կարգավիճակի վերականգնումն ու նրա հետագա զարգացումը, բնակավայրի գոտեւորման նոր նախագծի մշակումն ու ընդունումը։ Այսօր համարյա կազմալուծված է Գյումրու քաղաքային տրանսպորտը, որտեղ միակողմանի տերուտնօրենը երթուղայինների «գծատերերն» են։ Ծրագրում խնդիր է դրվում ձեւավորել քաղաքային ուղեւորափոխադրման տնտեսություն, ամեն տարի ձեռք բերել որոշակի քանակությամբ նոր ավտոբուսներ, նորից ստեղծել քաղաքային ավտոբուսային պարկ, նորոգման համակարգ, իրական մրցակցային պայմաններ, հսկողություն սահմանել երթուղիների սպասարկման որակի նկատմամբ։**

### Սոցիալական

**Ծրագրի երկրորդ մասը նվիրված է սոցիալական ոլորտին, որի բաժիններից առաջինը անօթեւանության խնդրի կարգավորումն է եւ սրա հետ կապված մի շարք հարցերում տեղական ինքնակառավարման մարմնի անելիքները։ Փաստաթղթում բերված հաշվումներով այսօր Գյումրիում, ընդհանուր առմամբ, անօթեւան է մոտավորապես 6 700 ընտանիք՝ 29 500 մարդ կամ քաղաքի փաստացի բնակչության մոտ 25 տոկոսը։ Նրանց թվից պետությունն այժմ ճանաչում է միայն երկրաշարժի հետեւանքով անօթեւան 2 200 ընտանիքների՝ իր կողմից փոխհատուցման իրավունքը։ Պետության կողմից փոխհատուցման ոչ ենթակա մնացած 4500 ընտանիքների թվում են, նաեւ, երկրաշարժից անօթեւան եւ չհաշվառված, պետության կողմից հաշվառված, ուսումնասիրված եւ մերժված, սեփական տներ կորցրած որոշակի թվով ընտանիքներ, խոշորացած եւ կիսված 1900 ընտանիքներ։ Երկրաշարժից անցած շուրջ քառորդդարյա ժամանակամիջոցում այդ աղետից անօթեւան ընտանիքների կազմերն անդամների թվով եւ կառուցվածքով աճել են, եւ շատ դեպքերում, ասենք, 1988 թվականի 5 հոգանոց ընտանիքը դարձել է 8-10-12 հոգի։ Այդ ընտանիքներին երկրաշարժին կորցրածի չափով բնակարանի հատկացումը, ինչը նախատեսված է ՀՀ կառավարության 1999 թ. հունիսի 10-ի N 432 որոշմամբ սահմանված կարգով, չի լուծում ընտանիքի բնակարանային խնդիրը. ընտանիքի անդամների մի մասը տեղափոխվում է նոր ստացած բնակարան, իսկ մյուսները դատապարտված են մնալ տնակներում։**

**Եթե նրանց խնդիրները պետությունը համեմատաբար կարճ ժամանակում լուծած լիներ, անօթեւանների ընդհանուր թիվն այսօր քաղաքում ավելի քան քառակի պակաս կլիներ, արձանագրված է ծրագրում։ Ու եթե այժմ էլ նման եւ նշված այլ խնդիրների լուծումների տարբերակներ չգտնվեն, քաղաքում անօթեւանների թիվը 5 տարի հետո կաճի 10-15 տոկոսով, 10 տարի հետո կաճի 20-30 տոկոսով, եւ այսպես շարունակ։ Ծրագրում առաջարկվող տարբերակներ են պետական բնակարանաշինության շարունակումը, բարեգործների, բարեգործական կազմակերպությունների, գործընկեր երկրների կառավարությունների հիմնարկների ներգրավումը, տեղի անօթեւանների համար մատչելի եւ երկարաժամկետ վարկերով բնակարանաշինության խթանման մեխանիզմի մշակումն ու ներդրումը, որոշ կատեգորիաների համար էլ՝ համայնքային, պետական, բարեգործական միջոցներով կառուցվող սոցիալական բնակարանների կամ արժանապատիվ հանրակացարանների կառուցումն ու ժամանակավոր օգտագործման տրամադրումը։**

**Փաստաթղթում արձանագրվում է, որ Գյումրիում դեռ շարունակում է գերակայող մնալ նաեւ սոցիալական օժանդակության անհրաժեշտությունը։ 2012 թվականին աղքատությունը Շիրակի մարզում 47 տոկոս է, եւ սննդի, հագուստի, կացարանի, առողջապահության, կրթության եւ մասնագիտացման հարցերում ուղղորդված օժանդակության կարիք կա։ Սոցիալական բաղադրիչն արդյունավետ օգտագործելու եւ խոցելի խմբերին հետզհետե գործունակ ու ինքնաբավ դարձնելու նպատակով նախատեսվող քայլերից են քաղաքապետարանի սոցիալական քաղաքականությունն իրագործելու կոչված սոցիալական հիմնադրամի ստեղծումը, սոցիալական ձեռնարկությունների հիմնումը, առանձին խմբերի մասնագիտական ուսուցման կազմակերպումը եւ այլն։ Մանրամասն հարցադրումներ կան նաեւ՝ կապված կրթության, առողջապահության, մշակույթի, հոգեւոր կյանքի զարգացման, զբոսաշրջության խթանման, քաղաքացիների հանգստի, ժամանցի պայմանների ստեղծման հետ։**

**Բավական մանրամասն մշակված են «Քաղաքը մերն է» քաղաքացիական նախաձեռնության ծրագրի նաեւ երրորդ ու չորրորդ մասերը՝ շրջակա միջավայր եւ Շիրակի մարզի կայուն զարգացում, տեղական ինքնակառավարում։**

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

# Պատահաբա՞ր է վթարվել Բաքվի Խազարի շրջանային դատարանի նախագահը

Սեպտեմբերի 4-ին Բաքվի Գարադաղի շրջանում ավտովթարի է ենթարկվել Խազարի շրջանի դատարանի նախագահ Իլհամ Աղաեւը: Ոստիկանության Գարադաղի բաժնի քննիչ Արիֆ Զահիդովի ասելով՝ «թիվ 197 երթուղային ավտոբուսը բախվել է Hyundai մակնիշի ավտոմեքենային, որը վարել է Գասիդ Աբասովը, վերջինս տեղում մահացել է: Վարորդից բացի մեքենայում են գտնվել Խազարի շրջանի դատարանի նախագահ Իլհամ Աղաեւը եւ վարորդի կինը՝ Գյուլնարա Աբասովան, որոնք ստացել են տարբեր աստիճանի վնասվածքներ եւ հոսպիտալացվել թ. 1 կլինիկական հիվանդանոցում: Մի քանի ժամ անց դատարանի նախագահ Իլհամ Աղաեւը մահացել է, իսկ վարորդի կինը կոմայի մեջ է»:

Սույն հաղորդագրությունը, որպես պաշտոնական, տարածել է vesti.az-ը: Այդ առթիվ մի քանի հարց է ծագում: Նախ, ինչո՞ւ դատարանի նախագահի մասնակցությամբ, այն էլ՝ վերջինիս եւ վարորդի մահվան ելքով, ՃՏՊ-ի մասին ոստիկանությունը հրապարակել է դեպքից մեկ օր անց: Ի՞նչը կամ ո՞վ է ստիպել, որ բավական բարձրաստիճան դատավորի՝ ավտովթարի ենթարկվելու եւ դրա հետեւանքով հիվանդանոցում մահանալու լուրը մի ամբողջ օր պահվի գաղտնի: Երկրորդ, խոսվում է ինչ-որ Hyundai մակնիշի մեքենայի մասին, բայց հստակ չի ասվում՝ այն դատավորի ծառայողակա՞ն է եղել, թե՞ նրա կամ վարորդի անձնական օգտագործման: Եթե մեքենան ծառայողական է եղել, ապա ինչո՞ւ պիտի այնտեղ գտնվեր նաեւ վարորդի կինը: Իսկ եթե պատկանել է վարորդին, ապա ինչո՞ւ է դատավորը ճամփորդել ոչ թե ծառայողական, այլ՝ վարորդին պատկանող Hyundai-ով:

Առանձնապես աչքի է զարնում, որ ոստիկանության հաղորդագրության մեջ նշված չեն ոչ Hyundai-ի, ոչ դրան «բախված երթուղային ավտոբուսի» պետհամարանիշները: Մի բան, որ որեւէ ՃՏՊ-ի դեպքում գաղտնիք չի համարվում եւ պարտադիր արվում է: Նշված չէ նաեւ, թե ո՞վ է վարել «թ.197 երթուղային ավտոբուսը», ի՞նչ հանգամանքներում է տեղի ունեցել մեքենաների «բախումը», ինչպես նաեւ՝ թե հատկապես ո՞ր ժամին, Գարադաղի շրջանի ո՞ր վայրում է տեղի ունեցել ճանապարհատրանսպորտային պատահարը: Ավելին, սույն լուրը տարածող vesti.az-ը տեքստը «զարդարել է» ՃՏՊ-ի լուսանկարով, որտեղ, սակայն, պատկերված է բեռնատարի բախումը մարդատարի հետ: Դրանից պետք է ենթադրել, որ կամ ոստիկանությունը չի տարածել ՃՏՊ-ի լուսանկարներ, կամ դատավորի մեքենային իրոք ոչ թե «երթուղային ավտոբուսն է բախվել», այլ՝ ծանր բեռնատար:

Դատական իշխանության հիերարխիայում ոչ երկրորդական տեղ զբաղեցնող պաշտոնյայի մահվան ելքով ՃՏՊ-ի մասին լրատվության մեջ այսքան «պատահական անփութություններ», ըստ էության, չպետք է տեղ գտնեին: Ուստի խիստ կասկածելի է, թե Բաքու քաղաքի շրջաններից մեկի դատարանի նախագահ Իլհամ Աղաեւը դարձել է սովորական ավտովթարի զոհ: Այս օրերին Ադրբեջանի իրավագիտական հանրության շրջանակներում քննարկման թեմա է Ռամիլ Սաֆարովին ներում շնորհելու Իլհամ Ալիեւի հրամանագրի օրինականությունը: Հարցն այնքան հնչեղություն է ստացել, որ հունգարական դատարանում Սաֆարովի դատապաշտպանն է «ոչ լրիվ գրագետ» որակել Իլհամ Ալիեւի հրամանագիրը եւ նկատել տվել, որ դրանում պետք է նշվեր, թե Սաֆարովը դատապարտվում է 8,5 տարվա ազատազրկման եւ ներվում՝ հաշվի առնելով, որ «սահմանված պատիժը կրել է հունգարական բանտում»:

Իսկ իրավագետ Խանլար Ալեքպերովը միանշանակորեն «քաղաքական» գնահատելով ներում շնորհելու Իլհամ Ալիեւի կարգադրությունը, ասել է. «Իրավաբանների, որ նախապատրաստել են այդ կարգադրությունը, խնդիրը նրանում էր, որ այդ քաղաքական որոշումը տրանսֆորմացվեր լեգիտիմ իրավական՝ սահմանադրական դաշտից դուրս չեկող ձեւակերպման: Օրինակ, բավական էր հետեւյալ՝ «ցմահ ազատազրկումը փոխարինել ութ տարի վեց ամիս ազատազրկումով» նախադասությունը գրել: Այդ դեպքում կարգադրությունը, թեեւ խիստ վերապահումներով, իրավական տեսանկյունից ավելի հասուն կլիներ» (տե՛ս http://www.contact.az/docs/2012 /Want%20to%20Say/090300009 717ru.htm):

Ադրբեջանցի իրավագետը փաստորեն «տհաս» է համարել ներում շնորհելու Իլհամ Ալիեւի կարգադրությունը: Կարելի է ենթադրել, որ մամուլում տեղ գտած թեման իրավագիտական հանրությունում ավելի թեժ քննարկումների տեղիք է տվել: Այս համատեքստում է, որ Խազարի շրջանի դատարանի նախագահ Իլհամ Աղաեւի մասնակցությամբ եւ նրա մահվան ելքով ՃՏՊ-ի մասին տեղեկատվության «անփութությունները» առանձնակի սրություն են ստանում: Իսկ ինչո՞ւ բացառել, որ Աղաեւը չի դարձել «գրագետ» կազմակերպված մահափորձի զոհ: Գուցե նա ինչ-որ տեղ «ավելի՞ն է ասել», քան իրավագետ Խանլար Ալեքպերովը մամուլում: Ընդ որում, վերջինս 1news.az-ի մի անստորագիր պասկվիլի թիրախն է դարձել: Ըստ երեւույթին, Բաքվում ռամիլսաֆարովյան «խմորը դեռ շատ ջուր է տանելու»:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

ՀԱԿԻՐՃ

# Օբամայի նոր ծրագրում Երուսաղեմը Իսրայելի մայրաքաղաքը չէ

Ներկայումս ԱՄՆ-ում անցկացվող Դեմոկրատական կուսակցության համագումարում հաստատվելիք նախընտրական ծրագիրը վկայում է, որ ԱՄՆ-ի եւ Իսրայելի միջեւ լարվածությունը խորանում է: Ի տարբերություն Օբամայի նախորդ ծրագրի, այս անգամ Երուսաղեմը չի նշվում որպես հրեական պետության մայրաքաղաք: Երուսաղեմն առհասարակ չի հիշատակվում: Ինչպես նշում է newsru.co.il կայքէջը, փաստաթղթում ընդամենը գրված է. «Նախագահը հաստատում է Իսրայելի ինքնապաշտպանության իրավունքը: Դա վկայում է Իսրայելի անվտանգության համար մեր հոգածության մասին»:

Հանրապետական կուսակցությունից նախագահության թեկնածու Միթ Ռոմնին ափսոսանք է արտահայտել այն կապակցությամբ, որ Դեմոկրատական կուսակցությունը պաշտպանեց Բարաք Օբամայի «ամոթալի դիրքորոշումը»: «ԱՄՆ-ի եւ մեր ամենաարժեքավոր դաշնակցի միջեւ սեպ խրելու նախագահի բազմամյա փորձերի հետեւանքով դեմոկրատները կորցրել են տարրական փաստերը ընդունելու ունակությունը: Նախագահ դառնալու դեպքում ես կվերականգնեմ բարեկամական հարաբերությունները Իսրայելի հետ», հայտարարել է նա:

# Ճապոնիան կգնի վիճելի կղզիները



Ճապոնիայի կառավարությունը համաձայնել է Կուրիխարա ընտանիքից գնել Արեւելաչինական ծովում գտնվող Սենկակու կղզիները: Այդ մասին հաղորդում է Ասոշիեյթեդ պրես գործակալությունը՝ վկայակոչելով ճապոնական աղբյուրներ:

Արշիպելագի 5 կղզիներից 3-ի դիմաց Ճապոնիան կվճարի 2,1 միլիարդ իեն (26 միլիոն դոլար) դրանց սեփականատեր ճապոնական ընտանիքին: Կուրիխարա ընտանիքի ներկայացուցիչները անցյալում վաճառքի գաղափարը համարում էին «կատակ», բայց վերջերս կղզիների նկատմամբ Չինաստանի հավակնությունները նրանց ստիպեցին վերանայել իրեն դիրքորոշումը:

Անմարդաբնակ Սենկակու (չինական անվանումը՝ Դյաոյույտայ) կղզիները Ճապոնիայի եւ Չինաստանի վեճերի առարկա դարձան դրանց ծանծաղուտում ածխաջրածինների հարուստ հանքաշերտերի հայտնաբերումից հետո: Երկու երկրները վկայակոչում են միջազգային տարբեր պայմանագրեր: Չինաստանը պնդում է, որ կղզիները հայտնագործել են չինացիները, բայց դրանք Ճապոնիային են անցել 1895-ի անիրավահավասար պայմանագրով: Երկրորդ աշխարհամարտից հետո կղզիներն անցան ԱՄՆ-ի իրավադասությանը, որը 1972-ին դրանք վերադարձրեց Ճապոնիային: Չինաստանը վիճարկում է այդ որոշումը:

Ճապոնիայից եւ Չինաստանից բացի, կղզիներին հավակնում է նաեւ Տայվանը, որի անկախությունը Պեկինը չի ճանաչում:

Պ. Ք.

# Հանդեսը տուգանվեց նախագահական զույգի լուսանկարների պատճառով




Փարիզի վերին ատյանի դատարանը VSD շաբաթահանդեսին տուգանել է լողազգեստով նախագահական զույգի լուսանկարների հրապարակման համար: Հանդեսը պարտավոր է 2000 եվրո վճարել նախագահ Ֆրանսուա Օլանդի կողակցուհի Վալերի Տրիրվեյլերին:

«Մեզ պարտավորեցրին 2000 եվրո վճարել հայցվորի պահանջած 30.000-ի փոխարեն,- Ֆրանսպրեսին հայտարարել է VSD-ի խմբագիր Ֆիլիպ Լաբին,- Մենք փոքր-ինչ զարմացած ենք, որ մեր դեմ են դուրս եկել նման սովորական լուսանկարների հրապարակման համար»: Նրա խոսքերով, լուսանկարներն արված են այս տարվա ամռանը նախագահ Օլանդի ամառային նստավայրում՝ Բրեգանսոնի դղյակում, Լազուր ափից ոչ հեռու: «Դրանք արձակուրդային սովորական լուսանկարներ են: Մենք ճիշտ նույն ձեւով՝ լողազգեստներով լուսանկարել էինք Սարկոզիին եւ Շիրակին իրենց կանանց հետ եւ միշտ հոգ էինք տարել, որ լուսանկարներում որեւէ անվայել բան չլինի», շարունակել է Լաբին:

Մինչդեռ Տրիրվեյլերի շրջապատում պնդում են, թե լուսանկարները «գողացվել են լուսանկարչից եւ չպետք է հրապարակվեին»: Տրիրվեյլերի փաստաբան Ֆրեդերիկ Ժիֆարի խոսքերով, դատարանը կարծում է, որ օրենքը խախտվել է 2 անգամ՝ չի պահպանվել հեղինակային իրավունքը եւ տեղի է ունեցել ներխուժում անձնական կյանք: Ի դեպ, Paris Match հանդեսը նույնպես հրապարակել է նախագահական զույգի լուսանկարները լողազգեստով, միայն թե դրանք զետեղել է ոչ թե շապիկի վրա, այլ ներսի էջերում:

Դատավճռի մեջ նշվում է, որ «բնավ հարկ չկար ցուցադրելու Տրիրվեյլերի լուսանկարները Բրեգանսոնի լողափում»: «Բացի դրանից, լուսանկարները չի կարելի անվնաս համարել վարկի համար, մասնավորապես այն պատճառով, որ նախագահի կողակցուհին այնտեղ երեւում է լողազգեստով: Ըստ որում, նա երբեք չի համաձայնել նման տեսքով կեցվածք ընդունել ֆոտոխցիկների առջեւ», ասվում է դատավճռում:

# ԱՄՆ-ում աճում է սննդի քարտերով ապրողների թիվը



ԱՄՆ-ում շարունակ աճում է բնակչության այն մասը, որը մթերք է ստանում սննդի հատուկ կտրոններով: Տնտեսագետները աճի ներկայիս միտումը արդեն համարում են վտանգավոր: Ներկայումս սննդի ձեռքբերման իրավունքի նմանօրինակ թղթեր ստացող ամերիկացիների թիվը մոտ 46,370 միլիոն է: Նրանց թիվը շարունակում է աճել գործազրկության մակարդակի աճին զուգընթաց, իսկ գործազրկությունն այժմ կազմում է 8,3 տոկոս:

Ընդհանուր առմամբ սննդի կտրոններով ապրում է 22,4 միլիոն տնտեսություն: Դա կազմում է Միացյալ Նահանգների ամբողջ բնակչության 15 տկոսը: Ամեն ամիս այդ նպատակով դաշնային բյուջեից ծախսվում է 6,025 մլրդ դոլար:

Ամերիկացիները կտրոններ են ստանում կառավարական օգնության Supplemental Nutrition Assistance հատուկ ծրագրի շրջանակներում:

Փորձագետները պնդում են, որ գործազրկությանը վերաբերող տվյալները իրականում ցույց չեն տալիս ամբողջ պատկերը: Supplemental Nutrition Assistance ծրագրի տվյալները ցուցադրում են իրավիճակի առավել ճշմարտացի պատկերը:

# Մշակույթ

ՎԵՐՖԵԼ-122

## Ազգի մեծությունը մարդասիրության մեջ է

**Հարգելի խմբագրություն**

Մոտենում է սեպտեմբերի 10, 20-րդ դարի համաշխարհային գրականության հայտնի դեմքերից մեկի՝ հայ ժողովրդի վաղեմի բարեկամ, գերմանալեզու գրող Ֆրանց Վերֆելի ծննդյան 122-րդ տարեդարձը: Մի մարդու, որն իր «Մուսա լեռան 40 օրը» էպիկական վեպով առաջինն արձագանքեց օսմանյան կայսրության բարբարոսությանը եւ գրեթե մեկ միլիոն տպաքանակով, աշխարհի 36 լեզուներով Հայոց ցեղասպանության ճշմարիտ պատմությունը ներկայացրեց մարդկությանը: Նույնիսկ Վիեննայում վեպը լույս տեսավ որպես գրպանի գիրք, իսկ չեխ կոմպոզիտոր Յոզեֆ Մատեյը այդ թեմայով ի հիշատակ զոհված հայորդիների ստեղծեց սիմֆոնիա եւ օպերա ու երազում էր, որ մի օր իր ստեղծագործությունները կբեմականացվեն Հայաստանի օպերային թատրոնում:



Վերֆելը իր վեպով ի հայս բերեց հայ ժողովրդի ոգու անկոտրում կամքը, մեր պատմության արյունալի էջերը, որի համար արժանացավ միջազգային մրցանակի, իսկ «Մուսալեռ» հայրենակցական միության կողմից նրան հետմահու շնորհվեց Մուսա լեռան պատվավոր քաղաքացիություն: Ճիշտ է, Վերֆելը օտարերկրացի է, սակայն միջազգային գրական ասպարեզում մրցանակի արժանացած այդ վեպով նրա անունը հավերժ կապվեց մեր պատմությանը եւ այսօր էլ հաստատապես ապրում է հայ հոգու հիշողության գանձարանում: Մենք պարտավոր ենք ոչ թե սոսկ խոսքերով հարգել մեծ հումանիստի գրողական ձիրքը եւ արարքը, այլեւ գործնականորեն գնահատել նրա մարդկային բարձր արժանիքները, եթե իհարկե բարեկիրթ ազգ ենք համարվում եւ մարդասիրությունը գնահատել գիտենք:

Վերֆելը կյանքից հեռացավ օտարության մեջ, ԱՄՆ-ի երախտապարտ հայերը նրա աճյունը նրա հարազատների խնդրանքով Կալիֆոռնիայից տեղափոխեցին Վիեննա, վերահուղարկավորեցին եւ կիսանդրի տեղադրեցին, սակայն այդ ամենը սփյուռքահայության շնորհքն էր, ոչ թե Հայաստանի: Եթե մեծ գրողը հրաշքով մեզ հետ լիներ, գուցե մի նոր վեպ ծնվեր, այս անգամ սումգայիթյան ցեղասպանության վերաբերյալ, որի շնորհքը, ցավոք, ժամանակակից հայ գրողներից եւ ոչ մեկը չունեցավ: Համոզված եմ, որ մեր քաղաքական վերլուծաբանները լավ էլ գիտակցում են, որ քաղաքականությունը հիմնականում գործում է երկու ուղղությամբ՝ ներքին եւ արտաքին, ներքինը պետության խիղճն է, արտաքինը՝ դեմքը, այնպես որ եկեք ներքինի հետ արտաքինը բարելավենք:

Ելնելով այս ամենից, մարդասիրական մեծ քայլ կլիներ, եթե մեր պետական այրերը Ձեր թերթի օգնությամբ աջակցեին, որ Ֆրանց Վերֆելի ծննդյան օրվա կապակցությամբ Գրողների միությունում, ի հարգանս մեր վաղեմի բարեկամի, կազմակերպվեր հանդիսավոր միջոցառում եւ Ցեղասպանության 100-րդ տարելիցի նախաշեմին նրա արձանը պատկառազդու կերպով տեղադրված լիներ Ծիծեռնակաբերդի ստորոտում կամ էլ հուշահամալիրի տարածքում: Իսկ որ Նոր Նորք համայնքի տարածքում ունենք արձան, որը անվանակոչված է մեծ գրողի անունով, թյուրիմացություն է եւ ոչ թե արձան, քանի որ անունը կա, ինքը չկա: Մենք պարտավոր ենք գնահատել ոչ միայն մեր մեծերի արժանիքները, այլեւ օտարներինը, իսկ Վերֆելի անունը հայ ժողովուրդը հավերժ կհիշի: Այնպես որ, որքան որ խառնաշփոթ քաղաքական իրավիճակում լինենք, մեր պետական այրերը, անկախ իրենց կուսակցական պատկանելությունից, պաշտոնի բարձրության աստիճանից, պարտավոր են այս հարցում լիարժեք ազգային մոտեցում ցուցաբերել, քանի որ այս առաջարկությունները բխում են պետության, ազգի շահերից: Եկեք գործով ապացուցենք, որ մենք ոչինչ չենք ուրանում, գիտենք և՛ գնահատել, և՛ հատուցել:

ԷՖՐԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ
Իրավաբան

## ՀՖՆ-ն սկսում է աշնանային համերգաշրջանը

**Վաստակավոր կոլեկտիվ Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախումբը սեպտեմբերի 10-ից հոկտեմբերի 20-ը սկսում է դասական երաժշտության 6-րդ երեւանյան միջազգային փառատոնի աշնանային համերգաշրջանը: Իսկ թե ի՞նչ անակնկալներ են սպասվում այդ ընթացքում եւ երաժշտասերներին ինչո՞վ կզարմացնեն «Ազգի» հարցին պատասխանեց ՀՖՆ-ի գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր Էդուարդ Թոփչյանը. «6-րդ փառատոնին կլինեն հրաշալի համերգներ, հրաշալի երաժիշտ-կատարողներ կժամանեն Հայաստան եւ կմասնակցեն նախատեսված 11 համերգներին, որոնցից 3-ը՝ կամերային, մնացյալը՝ սիմֆոնիկ»:**

**«Փառատոնի օրերին նշվելու է նաեւ անվանի երաժիշտ Մելիք Մավիսակալյանի 75-ամյակը, որի ընթացքում կհնչեն կոմպոզիտորի ստեղծագործությունները», տեղեկացրեց մաեստրոն: Կլինի նաեւ համերգ մաեստրո Լեւոն Չաուշյանի ղեկավարած անսամբլի հետ: «Իսկ դեկտեմբեր ամսին նախատեսվում է Պուչինիի «Տոսկա» օպերայի բեմադրությունը, որը դեռ չենք որոշել՝ կլինի համերգայի՞ն կատարում, թե՞...»:**



**Մաեստրոն տեղեկացրեց, որ կսկսվեն ամեն ուրբաթյա համերգները, որոնք կընթանան հրաշալի երաժիշտների ելույթներով: «Ազգի» հարցին, թե անակնկալը ո՞րն է, ասաց. «Հայաստանի ֆիլհարմոնիկը համալրվել է նոր երաժիշտ-կատարողով՝ Իսպանիայից ժամանել է գալարափողահար վալտորնիստ, որը ապրելու է Հայաստանում ու նվագելու է մեր նվագախմբի հետ: Եվ եթե առիթ գտնենք, նա կդասավանդի կոնսերվատորիայում: Շտապեմ ուրախացնել, որ տարվա սկզբին եւս երկու երաժիշտներ կմիանան ֆիլհարմոնիկին եւ առաջիկա 1,5 տարվա ընթացքում, եթե մեր հնարավորությունները թույլ տան, ապա 11 հրաշալի նոր երաժիշտներ կաշխատեն ֆիլհարմոնիկ նվագախմբում»:**

**Փառատոնի գեղարվեստական ղեկավարներն են Ալեքսանդր Չաուշյանը եւ Էդուարդ Թոփչյանը: Սեպտեմբերի 10-ին Արամ Խաչատրյան համերգասրահում տեղի կունենա փառատոնի հանդիսավոր բացումը՝ Ալ. Հարությունյանի «Տոնական նախերգանք» ստեղծագործությամբ: Ծրագրում ընդգրկված են Հայդնի թավջութակի կոնցերտը (թավջութակ՝ Ալեք. Չաուշյան - Մեծ Բրիտանիա), Ալ. Հարությունյանի շեփորի կոնցերտը (շեփոր՝ Սերգեյ Նակարյակով - Իսրայել): Ի դեպ այդ կատարումը նվիրվում է Ալ. Հարությունյանի հիշատակին: Կհնչեն նաեւ Բեռլիոզի սիմֆոնիաները:**

**Փառատոնն անցկացվում է ՀՀ նախագահի տիկին Ռիտա Սարգսյանի հովանու ներքո:**

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

## Իրանահայ ճարտարապետ Վարուժան Առաքելյանին կհանձնվի Ոսկե մեդալ

**Ինչպես «Ազգին» տեղեկացրեց «ԻԿՕՄՕՍ/Հայաստան» ՀԿ-ի նախագահ Գագիկ Գյուրջյանը, «ԻԿՕՄՕՍ/Հայաստան» կազմակերպության միջնորդությամբ Իրանի Իսլամական Հանրապետության տարածքում գտնվող հայկական մշակութային ժառանգության պահպանության գործում մեծ ավանդի եւ, մասնավորապես, 2008 թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության ցուցակում հայկական եկեղեցական համալիրների (Սբ Թադեի վանք, Սբ Ստեփանոս համալիր եւ Ձորձորի Սբ Մարիամ Աստվածածին) գրանցման գործընթացին ունեցած ակտիվ մասնակցության, ինչպես նաեւ ապրիլի 18-ի՝ Հուշարձանների եւ տեսարժան վայրերի միջազգային օրվա կապակցությամբ իրանահայ ճարտարապետ Վարուժան Առաքելյանը 2012 թ. ապրիլի 17-ին ՀՀ մշակույթի նախարարի հրամանով պարգեւատրվել է ՀՀ մշակույթի նախարարության «Ոսկե մեդալով»:**

**Այսօր Հայաստանի ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտում տեղի կունենա Վարուժան Առաքելյանին ՀՀ մշակույթի նախարարության «Ոսկե մեդալի» հանձնումը, ինչպես նաեւ ճարտարապետի կողմից կներկայացվի Ձորձորի Սբ Աստվածածնի տեղափոխման մասին պատմող տեսաշար:**



**Վ. Առաքելյանը ծնվել է 1934 թ. Թավրիզում: Ավարտել է Թեհրանի Գեղարվեստի համալսարանի ճարտարապետության բաժինը: Մասնագիտությամբ ճարտարապետ-քաղաքաշինարար է: 2006 թվականից անդամակցում է Հուշարձանների եւ տեսարժան վայրերի միջազգային խորհրդին (ԻԿՕՄՕՍ): Աշխատանքային կենսագրությունը կերտել է ԻԻՀ քաղաքաշինության բնագավառում, հեղինակ է 30-50 հազարանոց բնակչության համար նախագծված բազմաթիվ քաղաքների ու քաղաքային թաղամասերի: Վերջին կարեւոր աշխատանքներից է Թավրիզից 30 կմ հարավ-արեւմուտք, Սահանդ լեռան ստորոտին կառուցվող նոր քաղաքի նախագծումը՝ 300 հազար բնակչի համար:**

**1958 թվականից Վ. Առաքելյանը ներգրավված է Իրանի հայկական ժառանգության պահպանության գործում: 1960-ականներից սերտորեն համագործակցում է Իրանի հուշարձանների եւ ձեռարվեստի ժառանգության պահպանության պետական կազմակերպության հետ, որի ֆինանսական աջակցությամբ իրականացվում է Իրանում հայկական ժառանգության պահպանությունը: 1987 թ. ջրածածկ լինելու սպառնալիքի պատճառով, Վ. Առաքելյանի անձնական միջոցներով է մեկնարկել Ձորձորի եկեղեցու տեղափոխումը, վերականգնումն ու 2000 թ. վերաօծումը: Նա մեծապես նպաստել է հայկական 3 եկեղեցական համալիրների ճանաչմանը՝ որպես «բացառիկ, համընդգրկուն ժառանգություն» եւ դրանց գրանցմանը Համաշխարհային ժառանգության ցուցակում:**

Ս. Մ.

## Հայ բանաստեղծները՝ պոեզիայի Ստրուգյան փառատոնում

Անցած օգոստոսի 22-27-ը Մակեդոնիայի Հանրապետության Ստրուգա քաղաքում անցկացվեց «Ստրուգյան պոետական երեկոներ» միջազգային բանաստեղծական 51-րդ փառատոնը, որին առաջին անգամ մասնակցեցին հայ բանաստեղծներ: Եվրոպայի՝ այդ կարգի հեղինակավոր հանդիսությանը ներկա էին Հրանտ Ալեքսանյանը եւ Վարդան Հակոբյանը (Ստեփանակերտ). նրանք հանդես եկան բանաստեղծական ընթերցումներով, փառատոնի շրջանակներում կազմակերպված գիտաժողովին ներկայացրեցին իրենց դիտարկումները «Պոեզիան եւ հաղորդակցության արդի միջոցները» թեմայով:

Այդ շքեղ ու բովանդակալից հանդիսությունը հիշարժան բազմապիսի պահեր պարգեւեց աշխարհի 30 երկրներից ժամանած ավելի քան 70 եւ Մակեդոնիայի տասնյակից ավելի բանաստեղծներին, նրանց հնարավորություն տվեց հաստատելու ստեղծագործական նոր կապեր:

Փառատոնից դուրս Վ. Հակոբյանն ու Հ. Ալեքսանյանը անմիջական հանդիպում ունեցան Մակեդոնիայի հայ համայնքի ներկայացուցիչների հետ:

ԱՐՄԻՆԵ ՄԵԼԻՔՅԱՆ

## Հանդիսավոր արարողություն Սյունիքի մարզի Հարժիս գյուղում

**Մի քանի օր առաջ Սյունիքի մարզի Հարժիս գյուղում մեծ արարողություն էր, նշվում էր գիտելիքի ու դպրության օրը:**

**Ազատամարտիկ սակրավոր-հետախույզ Համլետ Մինասյանի անունը կրող դպրոցում մեծ միջոցառում էր: Այն նվիրված էր գիտելիքի օրվան, ինչպես նաեւ դպրոցի բակում տեղադրված անվանի ազատամարտիկի հուշարձանի տեղադրման 20-ամյակը:**

**2011թ սկսած մինչ օրս լեհ ժողովուրդը եւ լեհական հավատարմակալությունը Հայաստանում իր վրա է վերցրել Սյունիքի մարզի Հարժիս գյուղի Համլետ Մինասյանի անվան միջնակարգ դպրոցի վերանորոգման աշխատանքները՝ փուլ առ փուլ հասցնելով իր վերջնական ավարտմանը:**

**Միջոցառմանը ներկա էին ՀՀ-ում Լեհաստանի դեսպան Զդիսլավ Ռադզինսկին, նրա տեղակալը, Սյունիքի փոխմարզպետ Արա Դոլունցը, Հարժիս գյուղի գյուղապետ Սուրիկ Հարությունյանը եւ այլք:**

**Հյուրերն ու միջոցառման կազմակերպիչները հանդիսավոր կերպով կտրեցին դպրոցի կարմիր ժապավենը՝ մեկ առ մեկ ստուգելով մինչ օրս կատարված աշխատանքները:**

**Բացման ու ողջույնի խոսքով հանդես եկավ դպրոցի տնօրեն Վոլոդյա Հովսեփյանը՝ շնորհավորելով գիտելիքի օրվա առթիվ, բոլորին ցանկացավ բարձր առաջադիմություն եւ հաջողություն նոր ուսումնական տարվա ընթացքում:**

**Ելույթի վերջում նա շնորհակալագրեր հանձնեց Լեհաստանի դեսպանին, մարզպետին ու զոհված ազատամարտիկ Հ. Մինասյանի ծնողներին, ինչպես նաեւ գովասանագրեր հանձնեց 2011-12թթ. ուսումնական տարվա գերազանցիկ աշակերտներին:**

**Այնուհետեւ ելույթ ունեցան Լալազար Մինասյանը՝ Համլետ Մինասյանի հայրը, Լեհաստանի դեսպան Զդիսլավ Ռադզինսկին, փոխմարզպետ Ա. Դոլունցը, դպրոցի վաստակավոր ուսուցչուհի Ա. Մանուչյանը, գյուղապետ Ս. Հարությունյանը:**

**Վերջում տեղի ունեցավ ցերեկույթ՝ նվիրված Հ. Մինասյանին, դպրոցի աշակերտների մասնակցությամբ:**

**Ոչինչ չի մոռացվում, ոչ ոք չի մոռացվում՝ սա է մեր երկրի կարգախոսը:**

ԳԱՐԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

# Հայաստանի հավաքականներն առաջատարների խմբում են



Շախմատի համաշխարհային օլիմպիադայի 8-րդ տուրում Հայաստանի տղամարդկանց հավաքականը 3-1 հաշվով վստահ հաղթանակ տոնեց ուզբեկների նկատմամբ: Հաղթանակն ապահովեցին Վլադիմիր Հակոբյանն ու Գաբրիել Սարգսյանը, որոնք պարտության մատնեցին համապատասխանաբար Մարատ Ջումաեւին եւ Անդրեյ Կվոնին: Լեւոն Արոնյանը միավորը կիսեց Ռուստամ Կասիմջանովի հետ մրցավեճում, Սերգեյ Մովսիսյանն էլ հաշտություն կնքեց Անտոն Ֆիլիպովի հետ: Այս հաղթանակի շնորհիվ Հայաստանի հավաքականը վաստակեց 13 միավոր ու կրկին տեղ զբաղեցրեց առաջատարների խմբում:

8-րդ տուրից հետո միանձնյա առաջատարի դերը պահպանեց Ռուսաստանի հավաքականը, որը 2,5-1,5 հաշվով պարտության մատնեց ուկրաինացիներին ու վաստակեց 15 միավոր: Չինաստանի եւ Ադրբեջանի մրցավեճում գրանցվեց ոչ-ոքի: Մյուս կարեւոր մրցախաղերի արդյունքներն այսպիսին են. Մակեդոնիա-ԱՄՆ ՝ 1-3, Անգլիա-Ֆիլիպիններ՝ 1-3, Գերմանիա- Հունգարիա՝ 2,5-1,5, Հնդկաստան-Սերբիա՝ 2-2, Իսպանիա-Իսրայել՝ 0,5-3,5: Հայերի հետ 13-ական միավոր են վաստակել նաեւ Չինաստանի, ԱՄՆ-ի, Գերմանիայի եւ Ֆիլիպինների հավաքականները:

Վերջին տուրերում վերելքով է հանդես գալիս Հայաստանի կանանց հավաքականը՝ տոնելով 4-րդ անընդմեջ հաղթանակը: Մեր շախմատիստուհիները 3-1 հաշվով հաղթեցին Ռումինիայի ընտրանուն: Մեր թիմին հաղթական միավորներ պարգեւեցին Էլինա Դանիելյանն ու Մարիա Կուրսովան, որոնք առավելության հասան համապատասխանաբար Քրիստինա Ֆոյսորի եւ Ալինա, Ամիի նկատմամբ: Լիլիթ Մկրտչյան-Իրինա Բուլմագա, Լիլիթ Գալոյան-Ելենա Կոսմա պարտիաներն ավարտվեցին ոչ-ոքի: ՀՀ հավաքականը վաստակեց 12 միավոր ու մոտեցավ առաջատարների խմբին:

Կանանց մրցաշարում երկիշխանություն է: 14-ական միավորով աղյուսակը գլխավորում են Ռուսաստանի եւ Չինաստանի հավաքականները: Ռուսները 2,5-1,5 հաշվով պարտության մատնեցին ուկրաինուհիներին, իսկ Չինաստանի հավաքականը հաղթեց լեհերին՝ 3-1: 13-ական միավոր ունեն Ֆրանսիայի, Ուզբեկստանի եւ Հնդկաստանի շախմատիստուհիները: Օլիմպիադայի ավարտին մնաց 3 տուր:

# Հայ պատանիները նպաստեցին ռուսների հաջողությանը

**Ստամբուլում իրենց մրցավեճն ավարտեցին մինչեւ 16 տարեկան պատանի շախմատիստները, որոնք վիճարկում էին համաշխարհային պատանեկան օլիմպիադայի պարգեւները: Հայաստանի պատանեկան հավաքականը, որ 1998-ին եւ 2010-ին նվաճել էր օլիմպիադայի չեմպիոնի տիտղոսը, այս անգամ հաջող հանդես չեկավ: 10 մրցախաղերում վաստակելով 22 միավոր, մեր հավաքականը 40 թիմերի մրցապայքարում զբաղեցրեց 12-րդ տեղը:**

**9-րդ տուրում մեր հավաքականը 3,5-0,5 հաշվով պարտության մատնեց Պերուի շախմատիստներին: Միակ կես միավորը Դիեգո Կուելարի հետ պարտիայում մրցակցին զիջեց Տիգրան Հարությունյանը: Մանուել Պետրոսյանը հաղթեց Ալեքսանդր Պրինցիպեին, Նորայր Թորոսյանն առավելության հասավ Պաուլա Պարեդեսի նկատմամբ, իսկ Վլադիմիր Կանջարյանը պարտության մատնեց Էդիս Վեգային:**

**Ավարտական տուրում մեր հավաքականի մրցակիցը Ռուսաստանի պատանի շախմատիստներն էին, որոնք իրանցիների հետ պայքարում էին օլիմպիադայի չեմպիոնի տիտղոսի համար: Մեր շախմատիստներից միայն Վլադիմիր Կանջարյանին հաջողվեց կես միավոր վաստակել Մաքսիմ Վավուլինի հետ մրցավեճում: Տիգրան Հարությունյան-Ուրի Ելիսեեւ, Մանուել Պետրոսյան-Մաքսիմ Չիգաեւ, Նորայր Թորոսյան-Վլադիսլավ Արտեմեւ պարտիաներում հաղթեցին ռուսները: Այդ հաղթանակի շնորհիվ ռուսները վաստակեցին 29 միավոր ու արժանացան չեմպիոնի կոչմանը: Նրանց ընդամենը կես միավոր զիջեցին իրանցիները, որոնք լեհերին պարտության մատնեցին 2,5-1,5 հաշվով: Բրոնզե մրցանակակիր դարձավ Հնդկաստանի հավաքականը, որը 2,5-1,5 հաշվով հաղթելով ավստրալացիներին, վաստակեց 25,5 միավոր:**

# Վուդսը հասեց 100 մլն եվրոյի սահմանագիծը



Հանրահայտ գոլֆիստ Թայգեր Վուդսը դարձավ առաջինը, ում հաջողվեց մարզական կարիերայում 100 մլն դոլար պարգեւավճար վաստակել:

Գերմանական բանկի կազմակերպած գոլֆի մրցաշարում Վուդսը գրավեց 3-րդ տեղը ու արժանացավ 544 հազար դոլարի: Դա հնարավորություն ընձեռեց նրան հասնելու 100 մլն-ի սահմանագիծը: Մարզական կարիերայում նա վաստակել է 100 մլն 350 հազար դոլար:

Թայգեր Վուդսը հաղթող է ճանաչվել 74 մրցաշարում: Յուրօրինակ ռեկորդակիրը Սեմ Սնիդն է, որը լավագույնի կոչմանն արժանացել է 82 անգամ: Սակայն Սնիդի ելույթ ունենալու տարիներին պարգեւավճարների չափը մեծ չէր, ուստի նա ընդհանուր առմամբ 620 հազար դոլար է վաստակել: Իսկ ահա Վուդսը 38 մրցաշարերից յուրաքանչյուրում հաղթելու համար 1 մլն դոլարից ավելի պարգեւավճար է ստացել:

36-ամյա Թայգեր Վուդսը գոլֆի պատմության մեջ ամենատիտղոսակիր մարզիկներից մեկն է: Նա 14 անգամ հաղթող է ճանաչվել գոլֆի ամենախոշոր մրցաշարերում:

# «Զենիթի» խոշոր գործարքը

**Չեմպիոնների լիգայի խմբային մրցաշարի մեկնարկի շեմին Սանկտ Պետերբուրգի «Զենիթը» համալրվեց 2 ֆուտբոլիստով: Ակումբի հետ 5-ամյա պայմանագիր են կնքել պորտուգալական «Պորտոյի» բրազիլացի հարձակվող Հալկը եւ Լիսաբոնի «Բենֆիկայի» կիսապաշտպան Ակսել Վիտսելը: Ըստ տարբեր աղբյուրների, 2 ֆուտբոլիստի ձեռքբերման համար «Զենիթը» 80-100 մլն եվրո պետք է վճարի: Ռուսական լրատվամիջոցները տեղեկացնում են, որ Հալկի տրանսֆերը 40 մլն եվրո է: Պարզվում է, որ այդ գումարը «Զենիթը» կվճարի 3 տարվա ընթացքում՝ օգտագործելով նաեւ չեմպիոնների լիգայի մասնակցությունից ստացվելիք գումարները: Իսկ ահա ըստ պորտուգալական լրատվամիջոցների Հալկի համար «Զենիթը» պետք է 55 մլն եվրո վճարի:**

**Հալկը 2008-ի հուլիսին էր «Պորտո» տեղափոխվել Ճապոնիայի առաջնությունից: «Պորտոյի» կազմում նա դարձել է Պորտուգալիայի եռակի չեմպիոն, առաջնության լավագույն ռմբարկու, երկրի գավաթակիր ու Սուպերգավաթակիր, ինչպես նաեւ նվաճել է Եվրոպայի լիգայի գավաթը: Բրազիլիայի հավաքականի կազմում Հալկը 14 խաղ է անցկացրել, խփել է 5 գնդակ: Նա Լոնդոնի օլիմպիադայում Բրազիլիայի հավաքականի կազմում դարձել է արծաթե մեդալակիր:**

**Ըստ լրատվամիջոցների, Ակսել Վիտսելի համար «Զենիթը» 40 մլն եվրո պետք է վճարի: Բելգիացի ֆուտբոլիստով հետաքրքրվում էր նաեւ «Անժին», սակայն հետագայում ակումբը հրաժարվեց այդ մտքից:**

ԸՄԲՇԱՄԱՐՏ

# Միայն մեկ բրոնզե մեդալ



Թաիլանդում ընթացող ըմբշամարտի աշխարհի պատանեկան առաջնությունում մրցագորգ դուրս եկած հունահռոմեական ոճի մեր 7 ըմբիշներից միայն Կարապետ Չալյանին հաջողվեց մրցանակակիր դառնալ: Հայ ըմբիշը մինչեւ 74 կգ քաշային կարգում բրոնզե մեդալ նվաճեց:

Առաջին գոտեմարտում հայ ըմբիշը հաղթեց կորեացի Ջոն Պու Լե Սանին, այնուհետեւ պայքարից դուրս մղեց հնդիկ Ռավինդեր Ռավինդերին: Քառորդ եզրափակիչում Չալյանի մրցակիցը վրացի Տոռնիկե Զամաշվիլին էր, որը հաղթանակած թողեց մրցագորգը: Նա հասավ մինչեւ եզրափակիչ, որի շնորհիվ Չալյանն իրավունք ստացավ մասնակցելու բրոնզե մեդալի համար մրցավեճին: Այդ պայքարում հայ ըմբիշը հաջողության հասավ: Հաջորդաբար հաղթելով ուկրաինացի Ալեքսանդր Կուխտային եւ թուրք Իսմայիլ Կոկասլանին, հայ ըմբիշն արժանացավ բրոնզե մեդալի:

Մեր ըմբիշներից եւս 2-ն իրավունք ստացան պայքարելու բրոնզե պարգեւների համար, սակայն անհաջողության մատնվեցին: Մինչեւ 66 կգ քաշային կարգում Հայկ Արշակյանն առաջին գոտեմարտում զիջեց ռուսաստանցի Մագոմեդ Զուխաևովին, որը հասավ մինչեւ եզրափակիչ: Բրոնզե մեդալի համար պայքարում էլ Հայկն անհաջողության մատնվեց հունգարացի Բենիտո Մեջիայի հետ գոտեմարտում:

Նույնպիսի ճակատագրի արժանացավ նաեւ մինչեւ 55 կգ քաշայինների մրցավեճին մասնակցած Գեւորգ Ղարիբյանը: Նա առաջին գոտեմարտում հաղթեց Ռուսաստանը ներկայացնող Արթուր Սարգսյանին, իսկ հաջորդ մրցավեճում զիջեց մոլդովացի Վիկտոր Կիրբանուին: Բրոնզե մեդալի համար մրցավեճում էլ Գեւորգը 2 գոտեմարտ անցկացրեց: Առաջինում նա հաղթեց Գերմանիայի ներկայացուցիչ Իբրահիմ Ֆալակարային, իսկ 2-րդում պարտվեց կորեացի Սեունգ Հակ Կիմին:

Անհաջող ելույթ ունեցան Ռուդիկ Մկրտչյանը (50 կգ) եւ Վազգեն Խաչատրյանը (60 կգ), որոնք պարտվեցին առաջին գոտեմարտում: Վարոս Պետրոսյանն (84 կգ) ու Վահե Սիմոնյանը (96 կգ) պայքարից դուրս մնացին 2-րդ փուլում:

# Հայաստանը 53-րդն է, Մալթան՝ 139-րդը

ՖԻՖԱ-ի վարկանիշային նոր աղյուսակում Հայաստանի ազգային հավաքականը 3 հորիզոնականով բարձրացել ու զբաղեցնում է 53-րդ տեղը: 2014-ի աշխարհի առաջնության ընտրական մրցաշարում մեր հավաքականի առաջիկա մրցակից Մալթայի ընտրանին առաջընթաց է ունեցել 4 հորիզոնականով՝ զբաղեցնելով 139-րդ տեղը: Իսկ Բուլղարիայի հավաքականը, որի հետ մեր ֆուտբոլիստները կմրցեն սեպտեմբերի 11-ին, 89-րդ տեղում է: Բուլղարացիները նախորդ ամսվա համեմատ առաջադիմել են 5 տեղով:

Ընտրական մրցաշարում ՀՀ հավաքականի մրցակիցներից ամենաբարձր վարկանիշն ունի Իտալիայի ընտրանին, որը պահպանել է իր դիրքը 6-րդ հորիզոնականում: 10-րդ տեղում է Դանիայի հավաքականը, որի դիրքը եւս անփոփոխ է մնացել: Նույնը վերաբերում է նաեւ չեխերին, որոնք 19-րդ տեղում են:

Լավագույն տասնյակում նույնպես փոփոխությունները չնչին են: Առաջին եռյակը պահպանել է դիրքերը: Դասակարգման ցուցակի առաջատարն իսպանացիներն են, որոնց հաջորդում են Գերմանիայի ու Անգլիայի հավաքականները: Պորտուգալացիները շրջանցել են Ուրուգվայի հավաքականին ու զբաղեցնում են 4-րդ տեղը: 7-9-րդ տեղերը պահպանել են Արգենտինայի, Հոլանդիայի եւ Խորվաթիայի ընտրանիները:

Նախկին ԽՍՀՄ հանրապետությունների հավաքականներից ամենաբարձր վարկանիշն ունի Ռուսաստանը, որը 2 հորիզոնականով նահանջել է ու զբաղեցնում է 13-րդ տեղը: 2-րդ արդյունքն ունի Ուկրաինան, որը 6 հորիզոնականով բարձրացել է ու զբաղեցնում է 39-րդ տեղը: 3-րդ արդյունքը Հայաստանի հավաքականինն է, որից 2 հորիզոնական ներքեւ են հանգրվանել էստոնացիները: Նրանք 6 տեղով նահանջել են:

Մյուս հավաքականների ցուցանիշներն այսպիսին են. 70. Ուզբեկստան, 76. Բելառուս, 86. Վրաստան, 94. Լատվիա, 107. Ադրբեջան, 116. Լիտվա, 127. Թուրքմենստան, 141. Մոլդովա, 142. Ղազախստան, 143. Տաջիկստան, 197. Ղրղզստան:

# Դավիթ Մանոյանը վերադարձավ «Փյունիկ»

Ինչպես տեղեկացրել էինք, «Փյունիկի» կիսապաշտպան Դավիթ Մանոյանը փորձաշրջանի էր մեկնել Կրասնոդարի «Կուբան», որտեղ հանդես է գալիս ՀՀ հավաքականի հարձակվող Մարկոս Պիզելին: Պայմանագրի շուրջը կողմերը համաձայնության չեն եկել, ուստի Մանոյանը վերադարձել է «Փյունիկ»: Ներկայումս նա ազգային հավաքականի կազմում մասնակցում է ուսումնամարզական հավաքին:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

ԱԶԳ Օրվա հետքերով

# Ազգային ժողովի ...

1-ին էջից

Անդրադառնալով Ադրբեջանի վարքագծին՝ հայտարարությամբ նշվում է, որ վերջինս այդ քայլով հերթական անգամ վտանգում է տարածաշրջանային անվտանգությունը եւ ավելի խորացնում սանձազերծած հակահայկական թշնամանքի եւ ատելության մթնոլորտը, ոտնահարում միջազգային իրավական փաստաթղթերով երաշխավորված մարդու իրավունքները, կրկին ի ցույց դնում Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի խաղաղ կարգավորման բանակցային գործընթացը վիժեցնելու եւ դրանում միջազգային հանրության, մասնավորապես՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների կատարած աշխատանքը ձախողելու իր հետեւողական քաղաքականությունը: Հայտարարության մեջ կետ կա այն մասին, որ արմատավորված ատելության մթնոլորտը վերահաստատում է այն, որ ԼՂՀ-ն որեւէ կարգավիճակով Ադրբեջանի կազմում չի կարող լինել, ապա եւ հորդորվում է ժողովրդավարական արժեքներով առաջնորդվող բոլոր երկրների խորհրդարաններին՝ դատապարտել Հունգարիայի եւ Ադրբեջանի միջեւ 2012 թ. օգոստոսի 31-ին իրականացված գործարքը: Հայտարարությամբ Հայաստանի Ազգային ժողովն ակնկալում է միջազգային խորհրդարանական կազմակերպությունների համարժեք արձագանքը եւ համապատասխան հստակ գործողությունները:

Ասենք, որ չնայած քվեարկությամբ արտացոլված կոնսենսուսին՝ այս հայտարարության քննարկումները բավական բուռն էին, նրա մի դրույթին հստակ անհամաձայն պատգամավորներ կային (ԼՂՀ-ն որեւէ կարգավիճակով Ադրբեջանի կազմում չլինելու) եւ գտնում էին, որ այդ կետի փոխարեն պետք է լինի Հայաստանի կողմից ԼՂՀ-ն ճանաչելու եւ նրա հետ ռազմաքաղաքական դաշինք կնքելու դրույթ («Ժառանգություն», ՀՅԴ): Իսկ դա մեծամասնությունը վաղաժամ էր համարում: Բավական քննադատվեց նաեւ Հայաստանի ԱԳՆ-ն՝ տեղի ունեցողը չկանխելու եւ ժամանակին համարժեք քայլեր չանելու համար: Մոտ երեք տասնյակ պատգամավոր էր հերթագրվել, կային եւ խիստ քննադատական, եւ շատ բովանդակալից ելույթներ, որոնք, ափսոս, թերթի սուղ տարածքում հնարավոր չէ ներկայացնել:

Ասենք, որ քննադատությունից հետո նիստի համարյա վերջում պարզաբանումներ տված Հայաստանի արտգործնախարար **Էդվարդ Նալբանդյանը** ներկայացրեց պատմությունը, որ 2004-ից դեռ Հունգարիայից Սաֆարովին ստանալու Ադրբեջանի ջանքեր կային, իսկ հայկական կողմի՝ այդ քայլի անթույլատրելիության մասին հիշեցումներին Հունգարիան պարբերաբար հավաստիացրել է, որ դա բացառվում է, ներառյալ այս տարվա օգոստոսի 22-ից 24-ը: Եվ անգամ օգոստոսի 28-ին, երբ հայկական կողմն իր նախաձեռնությամբ մեկնել է Հունգարիա՝ ճշտելու այդ տեսակ լուրերի հավանականությունը, նույնպես այս կարգի հավաստիացում է ստացել: Արտգործնախարարն ասում էր, որ Հունգարիայի կառավարությունը հոդաբաշխ բացատրություն չի կարողանում ներկայացնել, թե ինչո՞ւ է գաղտագողի գործել, եւ ընդամենը մի չինծու նամակ է ցույց տալիս, որով իբր հավատացել է Ադրբեջանի կեղծ հավաստիացումներին: Սեպտեմբերի 2-ին Մինսկի խմբի համանախագահների հանդիպումը եւս ցույց է տվել, թե նախագահող երկրները տեղյակ չեն եղել այս գործարքին: Հայաստանի արտգործնախարարն ասում էր, որ Հունգարիայի կառավարությունը այս գործարքով մեծ հարված է հասցրել իր երկրի հեղինակությանը, հայ-հունգարական հարաբերություններին, մինչդեռ հունգարացի ժողովուրդը չի ընդունում իր կառավարության այս քայլը եւ դատապարտում է այն: Նա հույս ուներ, որ հայ եւ հունգար ժողովուրդները կկարողանան հաղթահարել այս փորձությունը. «Մարդասպանին ազատ արձակելու եւ մեծարելու՝ Ադրբեջանի ղեկավարության այս ցուցադրական, գռեհիկ քայլերը ցնցել են միջազգային հանրությանը, բայց ոչ պակաս ցնցում են Ադրբեջանից վերջին օրերին հնչեցվող արձագանքները: Ադրբեջանը, փաստորեն, իր ցինիկ արհամարհանքն է արտահայտում միջազգային իրավունքի եւ ընդհանրապես միջազգային հանրության նկատմամբ: Հայտնի են այն բազմաթիվ գնահատականները, որոնք տարբեր միջազգային կառույցների, երկրների կողմից տրվել են այս գործարքին: Ես կցանկանամ մեջբերել րոպեներ առաջ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի նախագահ Ժան-Կլոդ Մինյոնի հայտարարությունը, որտեղ հստակորեն մտահոգություն է հայտնվում, որ այս գործարքում չարաշահվել է Եվրոպայի խորհրդի իրավական գործիքը»: Նա ասում էր, որ միջազգային հանրությունը թույլ չպետք է տա Ադրբեջանի արկածախնդրական քաղաքականությանը բանակցային գործընթացը քողի տակ, եւ Հայաստանն էլ պետք է գործի գործընկեր երկրների հետ համատեղ՝ շարունակելով միջազգային հանրության կողմից ընդունելի, հավասարակշիռ եւ կառուցողական մեր քաղաքականությունը՝ ավելացնելով ջանքերը՝ ուղղված ԼՂ ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրականացման ճանապարհով հիմնախնդրի խաղաղ կարգավորմանը, տարածաշրջանում կայունության եւ անվտանգության ամրապնդմանը:

Նշենք, որ թեեւ ԲՀԿ-ականներ **Վարդան Օսկանյանը, Նաիրա Զոհրաբյանը, Վահե Հովհաննիսյանը** կոշտ քննադատել էին Հայաստանի դիվանագիտական կորպուսին՝ նշելով բացթողումները, սակայն ԲՀԿ խմբակցության տեսակետը վերապահված էր ներկայացնել **Ստեփան Մարգարյանին**, որը եւ փաստաթուղթը նորմալ եւ իրավիճակին համապատասխանող անվանեց: Նույն կերպ «Ժառանգության» անունից **Ռուբիկ Հակոբյանը** բազմաթիվ թերություններ էր գտել հայտարարության մեջ՝ այն թույլ փաստաթուղթ անվանելով, բայց միայն **Զարուհի Փոստանջյանն** էր դեմ քվեարկել: ՀՅԴ-ի տեսակետը ներկայացնող **Աղվան Վարդանյանը** հորդորում էր Ազգային ժողովին ավելի համարձակ լինել՝ քանի որ Հայաստանի նախագահի կոշտ հայտարարությունների նշաձողն այս հայտարարությամբ իջեցվում է: Իսկ ՀԱԿ-ի ներկայացուցիչ **Լեւոն Զուրաբյանը**, թեեւ հիշեցրեց ավելի վաղ արտահանձնման վերաբերյալ ՀԱԿ-ի հայտարարության կոշտ դրույթները, այդ թվում այն, որ արտահանձնման համար պատասխանատվությունը կիսում է նաեւ մեր իշխանությունը, բայց եւ նշեց, որ իրավիճակը պայթյունավտանգ է, այդ թվում հոդի պատերազմի էսկալացիայով, եւ կոշտ հակասություններ ունենալով իշխանությունների հետ՝ գիտակցում է այս հարցով միասնական ճակատով հանդես գալու անհրաժեշտությունը: Եւ ՀԱԿ-ը նույնպես կողմ քվեարկեց հայտարարությանը: Իսկ նրանից հետո ելույթ ունեցած ՀՀԿ խմբակցության ղեկավար **Գալուստ Սահակյանն** էլ երեւի հենց այս իրողությունն էր ակնարկում, ասելով, թե գնահատում է միահամուռությունն այս փաստաթղթի հետ կապված: Իսկ մինչ այդ էլ ինչ միտք ասես հնչել էր՝ «Կարթագենը պետք է կործանվի» (**Ա. Գեղամյան**), «Ձախողումներն արտաքին քաղաքականության մեջ կարող են տանել պարտության» (**Է. Շարմազանով**), «Հայրենասիրության մրցույթը ծիծաղելի է» (**Ն. Զոհրաբյան**) ու նույնիսկ երկաթե շերտի անհրաժեշտության (**Հ. Հարությունյան**) եւ կատարվածում տարածաշրջանային շահերի առկայություն էր ակնարկվել Ադրբեջանի գործողություններում (**Ս. Ֆարմանյան**): Ազգային ժողովի նախագահն էլ արտահերթ ելույթում մի լավ «նախշել» էր Ադրբեջանին:

ԱԽԹԱԼԱՅԻ ՄԻՋԱԴԵՊ

# Լոռու մարզպետարանը հերքում է

Սեպտեմբերի 1-ին ՀՀ ոստիկանության www.police.am պաշտոնական կայքէջում հրապարակվել էր օգոստոսի 30-ին Ախթալա քաղաքում տեղի ունեցած աղմկահարույց միջադեպի մասին հետեւյալ հաղորդագրությունը.

«Օգոստոսի 30-ի երեկոյան ոստիկանության Թումանյանի բաժնում ահազանգ էր ստացվել, որ ոմն Բոդոլ հարձակվել է Ախթալայի քաղաքապետ Հայկազ Խաչիկյանի տան վրա:

Դեպքի վայր մեկնած օպերատիվ-քննչական խումբը պարզել էր, որ Ախթալայի բնակիչ Արսեն Չիչյանը եւ Շնող գյուղի բնակիչ Էդգար Հախվերդյանը ժամը 18.30-ի սահմաններում հարձակվել են Կարեն Խաչիկյանին պատկանող Ախթալա քաղաքի Սպանդարյան փողոցի 52-րդ շենքի 10-րդ բնակարանի վրա, կոտրել մուտքի դուռը՝ ոչնչացնելով ու վնասելով տան գույքը, այնուհետեւ վնասել են նշված շենքի բակում կայանված, Կարեն Խաչիկյանի եղբոր՝ Հայկազ Խաչիկյանի «Մերսեդես Բենց» մակնիշի ծառայողական ավտոմեքենան, ինչի հետեւանքով պատճառել են առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս:

Փաստի առթիվ ՀՀ ոստիկանության Լոռու մարզի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 185 հոդվածի 3-րդ մասի առաջին կետով հարուցվել էր քրեական գործ:

Նախաքննությամբ պարզվել էր նաեւ, որ Կարեն Խաչիկյանը գալով տուն, իմացել էր կատարվածի մասին եւ հորեղբոր որդու՝ Վաչագան Խաչիկյանի հետ գնացել էին Արսեն Չիչյանի՝ Ախթալա քաղաքի Աբովյան փողոցի 22 շենքի թիվ 2 բնակարանը, որտեղ դիտավորյալ վնասել եւ մասամբ ոչնչացրել էին նրանց տան գույքը, հարվածներ հասցրել տան անդամներին:

Օգոստոսի 31-ին որոշումներ էին կայացվել Էդգար Հախվերդյանին եւ Արսեն Չիչյանին ՀՀ քրեական օրենսգրքի 185 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով որպես մեղադրյալ ներգրավելու մասին, նրանց նկատմամբ հայտարարվել էր հետախուզում եւ միջնորդություն էր ներկայացվել դատարան՝ որպես խափանման միջոց կալանք կիրառելու մասին:

Խուզարկությամբ Էդգար Հախվերդյանի տնից հայտնաբերվել էր ինքնաշեն ատրճանակ, իսկ Արսեն Չիչյանի տնից՝ 3 փամփուշտ:

Օգոստոսի 31-ին Էդգար Հախվերդյանը կալանավորվել է, իսկ Կարեն Խաչիկյանը՝ ձերբակալվել: Նախաքննությունը շարունակվում է»:

Ցավոք, որոշ լրատվամիջոցներ միտումնավոր թե ակամա, խեղաթյուրելով իրական փաստերը, գրել են, իբր իրավապահ մարմինների կողմից ձերբակալվել է Ախթալայի գործող համայնքի ղեկավար, սեպտեմբերի 9-ին կայանալիք ՏԻՄ ընտրություններում համայնքի ղեկավարի թեկնածու առաջադրված Հայկազ Խաչիկյանը:

Լոռու մարզպետարանը պաշտոնապես հերքում է տեղ գտած ապատեղեկատվությունը, ընդգծելով, որ Հ. Խաչիկյանը անմիջական մասնակցություն չի ունեցել միջադեպին, իսկ նրա նկատմամբ քննչական մարմնի կողմից որեւէ հետաքննական միջոցառում չի իրականացվել:

Ախթալա համայնքի ղեկավարի եւ ավագանու նախընտրական գործընթացին առնչվող որեւէ ապատեղեկատվություն չի կարող բացասաբար անդրադառնալ ընտրությունների բնականոն ընթացքի վրա:

ՄԱՆՎԵԼ ՄԻԿՈՅԱՆ
ՀՀ Լոռու մարզպետարան

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԲԱՑ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

**Հայտարարության սույն տեքստը հաստատված է բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն**
**Բաց ընթացակարգի ծածկագիրը՝ ԷԳ ՊԵԿ ԱՇՁԲ-5**

Պատվիրատուն՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն, որը գտնվում է ՀՀ ք. Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում, հայտարարում է բաց ընթացակարգով գնում, որն անցկացվելու է մեկ փուլով:

Բաց ընթացակարգով գնման հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար ք.Երևան, Ծով.Իսակովի 10 հասցեում գտնվող ուսումնական լսարանների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման գնման պայմանագիր (այսուհետև՝ պայմանագիր):

Գնման առարկա է հանդիսանալու ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար ք.Երևան, Ծով.Իսակովի 10 հասցեում գտնվող ուսումնական լսարանների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերումը, որի գնումն իրականացվելու է էլեկտրոնային գնման ձևով՝ ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ-1916-Ն որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան:

Կնքվելիք պայմանագրի կատարման ժամկետը՝ պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման ավարտն է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ բաց ընթացակարգի հայտեր կարող են ներկայացնել բոլոր անձինք, անկախ նրանց՝ օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման պահանջներին:

Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի պահանջների համաձայն՝ նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները և որոշումները գնումների բողոքարկման խորհրդին՝ գնումների աջակցման կենտրոն, «Գնումների մասին» ՀՀ օրենքի օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում:

Ընթացակարգին մասնակցելու համար Մասնակիցը ՀՀ ֆինանսների նախարարության www.armeps.am կայքի միջոցով ներկայացնում է Հայտ: Հայտին կցվում են համապատասխան փաստաթղթերը (տեղեկությունները)՝ հաստատված էլեկտրոնային ստորագրությամբ կամ բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել մինչև 19.10.2012թ. ժամը՝ 15:00-ն:

Հայտերը բացվում են հայտերի բացման նիստում՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետին:

Բաց ընթացակարգի հաղթողը կճանաչվի մասնակիցների բավարար գնահատված հայտերից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցի հայտը:

Մասնակիցների որակավորման տվյալների՝ բաց ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին համապատասխանությունը գնահատելու համար, մասնակիցները պետք է պատվիրատուին ներկայացնեն բաց ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթեր:

***ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե***

ԿԱԼԻՖՈՌՆԻԱ

# Սանտա Կլարայի հայազգի դատավորի որդին զոհվել է Աֆղանստանում

«Հինգ տարի առաջ ինքնաշեն զենքի պայթյունից մի կերպ փրկված եւ վիրավոր վիճակում իր ընկերոջը օգնության հասած նավատորմի կապիտան Մեթ Մանուկյանի բախտն այս անգամ չբերեց: Օգոստոսի կեսերին Հարավային Աֆղանստանում նա զոհ գնաց ոստիկանի տարազ հագած մի ապստամբի հանկարծակի հարձակմանը», գրում է Թրեյսի Կապլանը «Սան Խոսե Մերկուրի նյուզ» թերթում, որտեղից լուրը արտատպել է «Արմինյն միրոր-սփեքթեյթր» շաբաթաթերթը:



Մեթ Մանուկյանը, ըստ լրատվության, 29-ամյա որդին էր Սանտա Կլարա օկրուգի դատավոր Սոկրատ «Փիթ» Մանուկյանի եւ օկրուգի դատավորի օգնական Պատրիշա Բամատր-Մանուկյանի: Ծառայության չորրորդ շրջանն էր անցկացնում Աֆղանստանում: Ավարտել էր 2005 թվին Արիզոնայի համալսարանի քաղաքագիտության բաժինը: Բանակում յոթ տարվա ծառայությունից հետո նա մտադիր էր հաջորդ տարի ընդունվել «Գոլդն Գեյթ» համալսարանի իրավագիտական բաժինը: Հ. Ծ.

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 5.9.2012, գինը՝ 100 դրամ, տպագրուած է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: